



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ «ՁԵՌՔՈՎ» ՄԱԿԱԳՐՈՒՄԸ ԵՎ
ԱՆԿԱԽ ՈՒ ԱՆԱԶԱՌ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԳՈՐԾԻ
ԱՐԴԱՐԱՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԴՈՒ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ 2022



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆ**



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

**ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ «ԶԵՌՔՈՎ» ՄԱԿԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿԱԽ ՈՒ
ԱՆԱԶԱՌ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐԱՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԽՈՐՔԱՅԻՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Դատավորների միջև գործերի բաշխման ներկայիս եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածման հրապարակային աղբյուրներում տեղ գտած բողոքներն ու մտահոգությունները.....	8
Գլուխ 2. Սույն զեկույցի հիմքում ընկած առանցքային խնդիրները.....	11
Գլուխ 3. Դատավորների միջև գործերի բաշխման վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումներն ու խնդրի ոչ լիարժեք կարգավորվածությունը.....	15
Գլուխ 4. Անկախ դատարանը՝ որպես անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ. իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը. դատավորների միջև գործերի բաշխման դերը դատարանի անկախության երաշխիքի ապահովման համատեքստում.....	26
Գլուխ 5. Քննարկվող դրույթներով նախատեսված կարգավորումների անկատարությունը, իրավակիրառ պրակտիկայում դրանց հնարավոր խնդիրները. խնդրի դիտարկումը սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ապահովման համատեքստում.....	38
Գլուխ 6. «Անհաղթահարելի ուժ» եզրույթի մեկնաբանությունը.....	46

Ներածություն

Դատական օրենսգիրքն ամրագրում է դատական գործերի բաշխումը համակարգչային ծրագրով (ավտոմատացված համակարգով)՝ որպես գործերի բաշխման այնպիսի հիմնական եղանակ, որից, ըստ օրենքի, բացառություն կարող է արվել միայն մեկ դեպքում՝ եթե առկա է անհաղթահարելի ուժ ու այդ անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել համակարգչային ծրագրի միջոցով: Այսինքն՝ օրենքը դրանով ամրագրել է բացառության հաղթահարման բարձր շեմ:

Եվ միայն այս բացառիկ դեպքում է Դատական օրենսգիրքը թույլ տալիս դատական գործերի բաշխումն իրականացնել ոչ համակարգչային կամ ոչ ավտոմատացված եղանակով՝ առանձին դատարանների նախագահների կողմից: Սակայն այս դեպքում էլ, ինչպես օրենքն է ամրագրում, գործերը դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության:

Համակարգչային ծրագրով դատավորների միջև գործերի բաշխման մեխանիզմի առկայությունը պայմանավորված է այն արժեքների բարձր պաշտպանության անհրաժեշտությամբ, որի երաշխավորմանը կոչված է ավտոմատացված համակարգը: Այսինքն՝ այնպիսի համակարգ, որ բացառում է մարդկային հայեցողությունը:

Խոսքը վերաբերում է դատավորների անաչառությանն ու անկախությանը, որի հետ էլ անմիջականորեն կապված են մարդու սահմանադրական իրավունքները՝ սկսած արդար դատաքննությունից մինչև անձնական ազատություն (օրինակ՝ ձերբակալման կամ կալանավորման իրավաչափություն) և անձնական ու ընտանեկան կյանք (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունների կամ նամակագրության վերահսկողություն):

Բանն այն է, որ 2021 թվականի հուլիսից քրեական գործերից մեկի նախաքննության շրջանակում քրեական հետապնդման մարմնի կողմից առգրավվել են դատավորների միջև գործերի բաշխման համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիները: Այդ փաստով պայմանավորված՝ Դատական օրենսգրքի «անհաղթահարելի ուժ» հասկացությունը գործնականում մեկնաբանվել է այնպես, որ գործ ունենք այդպիսի ուժի հետ: Ըստ այդմ, գործարկվել է դատավորների միջև դատական գործերի բաշխման կամ գործերի մակագրության «ձեռքով» համակարգ, որն իրականացնում են առանձին դատարանների նախագահներ: Ընդ որում, օրենքում որևէ կերպ չեն բացահայտվում «անհաղթահարելի ուժի» չափանիշները:

Ավելին, ստեղծված իրավիճակը բացառությունից վերածվել է երկրի դատական ողջ համակարգի վրա ազդող կանոնի՝ էլ չասած, որ նշված փաստն ակնհայտորեն չի կարող բավարարել անհաղթահարելիության շեմը:

Այլ կերպ, սույն զեկույցով բարձրացված խնդիրն այն է, որ առկա են օրենսդրական անորոշ կանոններ ու այդ կանոնները գործնականում ստացել են այնպիսի մեկնաբանություն ու այդ մեկնաբանությամբ կիրառություն, որ հանգեցրել են խնդիրների մարդու սահմանադրական իրավունքների հարցում:

Նշվածն առավել խնդրահարույց է դառնում այն առումով, որ գործ ունենք անորոշ գործնական իրավիճակի հետ: Նախ, ժամկետներով սահմանափակված չէ քրեական գործի նախաքննությունը (նախաքննության շրջանակում է տեղի ունեցել առգրավումը): Նույնը վերաբերում է նաև նույն գործի դատական քննությանը, եթե այն ունենա դատական հեռանկար: Պետք է հաշվի առնել նաև նախաքննությանը կամ դատական քննությանն առնչվող դատական բողոքարկումները, այն է՝ նախնական ու հետագա դատական վերահսկողության ենթակա հարցերը: Այսինքն՝ պարզ չէ, թե երբ կվերացվի կամ կդադարեցվի առգրավումը, իսկ գոնե մոտավոր ժամկետներ չեն նշվում:

Ընդ որում, ինքնին նշված քրեական գործի նախաքննության իրականացման վիճարկման կամ չիրականացման հարց սույն զեկույցում բարձրացված չէ: Բարձրագույն դատական խորհրդի հետ կապված էլ զեկույցն ամրագրել է, որ խորհրդի հետ հաստատված է Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցված աշխատանք:

Հարցն այլ է. բավարար օրենսդրական կանոնների բացակայության և գործնական անթույլատրելի մեկնաբանության պատճառով ստացվել է այնպես, որ մեկ քրեական գործով քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշման կամ միջամտության արդյունքում կաթվածահար է եղել ՀՀ-ում արդարադատության (քրեական, վարչական, քաղաքացիական) ողջ համակարգի համար նախատեսված համակարգչային ծրագրով դատավորների միջև գործերի բաշխման կամ մակագրության ավտոմատացված կամ էլետրոնային համակարգը, իսկ դրա հետևանքով էլ լուրջ խնդիրներ են առաջացել մարդու սահմանադրական իրավունքների համար:

Զեկույցում բարձրացված խնդիրներից է նաև այն, որ դատական գործերի բաշխման գործընթացում հայեցողականությունն ու կամայականությունը բացառելուն և յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորելուն ուղղված ավտոմատացված

համակարգի չգործարկման պայմաններում դատական գործերը բաշխվում են դատարանի նախագահների կողմից՝ առանց ամրագրված կամ գործող միասնական չափանիշների ու մոտեցումների, իսկ Դատական օրենսգիրքն էլ չի նախատեսում կարգավորումներ նաև նման դեպքերի համար: Ստեղծված իրավիճակն նույնպես խնդրահարույց է մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից:

Սույն զեկույցը պատրաստելու ընթացքում հարցումներ են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդին, ինչպես նաև առանձին դատարանների նախագահների: Նրանց պարզաբանումներն ավելի են ամրապնդել համոզմունքն առ այն, որ նշված մարմինները կամ հաստատություններն իրենք չունեն պատկերացում, թե երբ է գործարկվելու համակարգչային ծրագիրը, ինչպես նաև այն, որ դատարանների նախագահների համար գոյություն չունի անգամ չափանիշների միասնական համակարգ, որ կարող էր առնվազն նվազագույն մակարդակով զեզոքացնել «ձեռքով» մակագրության համակարգի ռիսկերը:

Զեկույցի հիմքում են դրվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մտահոգություններ ու բողոքներ ինչպես ազատությունից զրկված անձանցից ու փաստաբաններից, այնպես էլ ինչպես մեզ ուղղված տարբեր դատավորների կոնֆիդենցիալ, այնպես էլ մի շարք դատավորների հրապարակային մտահոգություններ: Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարցումներ է ստացել նաև միջազգային մի շարք կառույցներից (Եվրոպայի խորհուրդ, ՄԱԿ և այլն):

Զեկույցի հիմքում դրվել են նաև հրապարակային նյութերի դիտարկման արդյունքները:

Այս ամենին պետք է ավելացնել նաև, որ օրենսդրական կարգավորումներն այն աստիճան անկատար են, որ համակարգչային ծրագրի չգործելու պատճառով դատարանի նախագահին վերապահված գործերի բաշխման կանոններն անգամ չեն պահպանվում, ինչն անմիջական խնդիրներ է պարունակում մարդու իրավունքների համար:

Օրինակ՝ ուսումնասիրությունները վկայում են, որ չի պահպանվում (հաճախ) ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության դատական գործերի բաշխման պահանջը: Մեկ այլ դեպքում չի պահպանվում դատական գործերի բաշխման պատահականության սկզբունքը: Ավելին, ուսումնասիրությունները վկայում են, որ գործող համակարգը հանգեցրել է առավել վտանգավոր հետևանքների՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուսումնասիրությունների ընթացքում ներկայացվել են տեղեկություններ այն մասին, որ տևական ժամանակ է, ինչ որոշ դատավորներ այլևս չեն քննում որոշակի

կատեգորիայի գործեր (օրինակ՝ գործեր, որոնք բարդ են, ունեն զգայունություն, ներկայացնում են հանրային հետաքրքրությունն)՝ այդպիսիք այդ դատավորներին մտադրված չմակագրելու արդյունքում: Սա էլ վտանգավոր է ոչ միայն դատավորների միջև տարբերակումների կամ նրանց «դատական մեկուսացման», այլ հենց մարդու իրավունքների համար համակարգային վտանգների տեսանկյունից և այլն:

Ըստ հավաստի ահազանգերի՝ Վարչական դատարանում, օրինակ, Դատարանի նախագահին ինքն է որոշում 5 դատավոր ունեցող դատական կազմերում ընդգրկվող դատավորներին՝ առանց չափանիշների, սեփական հայեցողությամբ: Խոսքը նաև դատական կազմերում հաճախ կրկնվող՝ նույն դատավորների ընդգրկելու խնդրի մասին է: Խոսքն այն էլ վերաբերում է բացառիկ զգայուն հարցերի, ինչպիսիք են, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված, թեկնածուներ գրանցելու կամ չգրանցելու հետ կապված որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերը կամ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Երևանի ընդհանուր իրավասության դատարանում, ըստ մեզ ներկայացված ահազանգերի, ընդհանրապես մակագրություններ է անում նաև դատարանի աշխատակազմի ղեկավարը՝ բացի այն, որ չկան ամրագրված չափանիշներ հենց դատարանի նախագահի համար: Նշվող պատճառն այն է, որ թե՛ ֆիզիկապես, թե՛ մասնագիտական առումով դատարանի նախագահը, այսինքն՝ մեկ մարդ, ի վիճակի չէ իրականացնել այդքան գործերի մակագրություն:

Սույն զեկույցում կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների վրա հիմնած վերլուծությամբ հստակ ցույց է տրված մարդու սահմանադրական իրավունքների համար խորքային վտանգներ պարունակող իրավիճակներն ու մեկնաբանությունները՝ օրենսդրական ապահովագրող կարգավորումների բացակայության պայմաններում, քրեական հետապնդման մարմնի միջամտության վտանգավոր հետևանքները ՀՀ ողջ դատական համակարգի նկատմամբ ու այն էլ անորոշ ժամկետով, ինչպես նաև ցույց են տրված մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ:

Խնդրի հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Ըստ այդմ, Բարձր դատարանին ուղղված դիմումով, վիճարկվել են Դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-16-Ն-6

որոշման 4-րդ կետի և Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին:

Սույն զեկույցի հրապարակման պահի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի այդ դիմումի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը չէր հրապարակվել:

Գլուխ 1. Դատավորների միջև գործերի բաշխման ներկայիս եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածման հրապարակային աղբյուրներում տեղ գտած բողոքներն ու մտահոգությունները

Դատական գործերի բաշխման ավտոմատացված համակարգը, որն ուղղված է հայեցողականությունն ու կամայականությունը բացառելուն և յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորելուն, այլևս չի գործարկվում և նման պայմաններում այն իրականացվում է դատարանի նախագահների կողմից՝ առանց չափանիշների ու միասնական ամրագրված մոտեցումների, իսկ Դատական օրենսգիրքն էլ չի նախատեսում կարգավորումներ նման դեպքերի համար: Արդյունքում՝ ստեղծված իրավիճակը հանգեցնում է խնդիրների մարդու սահմանադրական իրավունքների համար:

Նշվածի պատճառով մարդու սահմանադրական իրավունքների խնդիրներ են վեր հանվել ինչպես հրապարակային նյութերի դիտարկման, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով:

Ազատությունից զրկված մի շարք անձանցից, ինչպես նաև փաստաբաններից Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել մտահոգություններ ու բողոքներ այն մասին, որ դատական գործերի բաշխման ներկայիս կարգի պայմաններում ոտնահարվում են իրենց արդար դատաքննության և այլ իրավունքներ, խաթարվում է օրենքով ստեղծված անկողմնակալ դատարանի իրավական պահանջը:

Ընդ որում, բողոքները հասցեագրվել են հենց այն անձանցից, որոնք կալանավորվել են էլեկտրոնային կամ ավտոմատացված համակարգի չգործելու պայմաններում: Օրինակ՝ կոնկրետ դեպքերից մեկով ՔԿՀ-ից բողոք հասցեագրած անձը դիմել է նույն խնդրով Մարդու իրավունքների պաշտպանին ու շարունակում է պնդել, որ իր գործով կալանքի միջնորդության հարցով «ձեռքով» մակագրությամբ հատուկ է ընտրվել այնպիսի դատավոր, որի նախագահությամբ իր կալանավորման միջնորդության քննության ընթացքում իր ազատ արձակվելու հնարավորությունները գրեթե բացակայել են, ինչպես նաև չի ապահովվել իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգություններ արտահայտող հարցումներ է ստացել նաև իրավապաշտպան միջազգային կառույցներից (Եվրոպայի խորհուրդ, Միավորված ազգերի կազմակերպություն և այլն): Մասնավորապես, հարցումների էությունն այն է, որ մտահոգություններ կան ավտոմատացված համակարգի չգործելու և հատկապես չգործելու պատճառների մասին:

Այսպես, ներկայում դատավորների միջև գործերի բաշխումն իրականացվում է ոչ թե Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, այլ դա անում են առանձին դատարանների նախագահներ: Նշվածի

կապակցությամբ Բարձրագույն դատական խորհուրդը Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը, որպես պաշտոնական պատճառ, նշել է դատական գործերի բաշխումը հատուկ համակարգչային ծրագրով իրականացնելու անհնարինությունը:

Նշվածն էլ, ըստ խորհրդի, իր հերթին պայմանավորված է նրանով, որ հարուցված քրեական գործի շրջանակներում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիներն առգրավված են և այդ փաստով էլ առաջացել է անհաղթահարելի ուժ:

Ըստ Բարձրագույն դատական խորհրդի՝ ներկա դրությամբ Վերաքննիչ քրեական, Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ վարչական դատարանների, Սնանկության դատարանի, Երևանի ընդհանուր իրավասության դատարանի և Վարչական դատարաններում գործերի բաշխման և մակագրման ավտոմատացված համակարգը, փաստացի, չի գործում¹:

Պետք է նկատի ունենալ նաև, որ ինչպես վկայում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը, ստեղծված իրավիճակի պատճառով դատական գործերի բաշխումը համակարգչային ծրագրով իրականացնելու անհնարինության պայմաններում դրանց բաշխումը դատարանների նախագահների կողմից դատարանի անկախությունն և բաշխման անաչառությունը ենթարկվում է նաև հրապարակային կասկածների, այդ թվում՝ խորհրդարանային քննարկումներով:

Այս հարցով Մարդու իրավունքների պաշտպանին մտահոգություններ է փոխանցել նաև ՀՀ Փաստաբանների պալատը: Պալատը տեղեկացրել է, որ փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն իրենց մտահոգությունն ու դժգոհությունն են ներկայացրել գործերի ներկայիս բաշխման եղանակի հետ կապված: Մտահոգությունը, մասնավորապես, վերաբերում է դատական գործերի բաշխման ներկայիս իրավիճակին, որը գործնականում կարող է հանգեցնել խնդիրների: **Վտանգավոր է, օրինակ, դիտվում այն, որ դատարանի նախագահի կողմից գործերի բաշխման պարագայում գործի ելքի վրա ցանկալի ազդեցությունը կարող են ունենալ քրեական հետապնդման համապատասխան մարմինները գործերի բաշխման ընթացքին հետևելու և նախընտրելի պահին գործը դատարան մուտքագրելու միջոցով:**

Տարբեր փաստաբաններ Մարդու իրավունքների պաշտպանին նման բողոքներ հայտնել են նաև առանձին: Ըստ վերջինների՝ դատարանների նախագահների կողմից գործերի բաշխման պարագայում հնարավոր են օրենքով ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարանի, դատավորների անկախության երաշխիքների խաթարման այնպիսի լուրջ ռիսկեր և վտանգներ, որոնք հանգեցնելու են Սահմանադրությամբ ամրագրված և միջազգայնորեն երաշխավորված մարդու արդար դատաքննության,

¹ Հասանելի է <https://hetq.am/hy/article/134040> հղումով:

անձնական ազատության և մի շարք այլ իրավունքների ոտնահարումների (այս մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի հետագա շարադրանքում):

Այս ամենին պետք է ավելացնել այն, որ **տարբեր դատավորներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մտահոգություններ են հայտնել** այն մասին, որ գործերի բաշխման համակարգչային ծրագրի բացակայությունը դատական համակարգում մարդու իրավունքների լուրջ ռիսկեր է առաջացրել, այն ոտնահարում է դատավորների անկախությունն ու անաչառությունը: Այս դատավորները նախընտրել են չհրապարակել իրենց անունները՝ հաշվի առնելով ճնշումների կամ հետապնդումների ենթարկվելու վտանգները: Այս մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի հետագա շարադրանքում:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել 2021թ. դեկտեմբերի 21-ին հրապարակված՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված մի խումբ դատավորների մտահոգություններին: Սրանք նույնպես դատարանների անկախության և անաչառության սահմանադրական պահանջների ոտնահարումների մասին է: Ընդ որում, դատավորների այս հրապարակային մտահոգություններում ուղիղ տեքստով խոսվում է այն մասին, որ ստեղծված իրավիճակը խաթարում է օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից մարդու արդար դատաքննության իրավունքի ապահովման պահանջը: Այս հարցն էլ իր հերթին ուղիղ կապված է դատարաններում մարդու մյուս իրավունքների հետ՝ անձնական ազատության (օրինակ՝ ձերբակալման կամ կալանքի իրավաչափություն), անձնական և ընտանեկան կյանքի (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունների կամ նամակագրության վերահսկողություն) և այլ իրավունքներ: Ընդ որում, հենց իրենք դատավորները ստեղծված իրավիճակը կապում են Դատական օրենսգրքի կարգավորումների անկատարության հետ, ինչն էլ հանգեցնում է խնդիրների Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացման հարցում²:

² Հասանելի է https://armdaily.am/?p=163166&l=am%2F&fbclid=IwAR1Sl-eXG_N5AVLZcKiSvIS6EvnBWlNmWtJhpotFg2Mp6taxzwV9qzP5Xkl հղումով:

Գլուխ 2. Սույն զեկույցի հիմքում ընկած առանցքային խնդիրները

Սույն զեկույցում բարձրացվող խնդիրը առավել հստակ ներկայացնելու նպատակով հարկ ենք համարում առանձին անդրադարձ կատարել զեկույցի հիմքում ընկած հիմնաքարային և առանցքային մի շարք խնդիրների:

Օրենսգրքի 9-րդ գլուխը կարգավորում է դատարաններում գործերի բաշխման հետ կապված հարաբերությունները:

Մասնավորապես, Օրենսգրքի 40-րդ հոդվածը սահմանում է դատավորների միջև գործերի բաշխման և վերաբաշխման կարգը:

Օրենսգրքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ դատավորների միջև գործերի բաշխումը, վերաբաշխումը և կոլեգիալ դատական կազմերի ձևավորումը կատարվում են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով: Այսինքն՝ հոդվածն ամրագրում է գործերի բաշխման եղանակը:

Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է հատուկ կարգավորում՝ բացառություն դատավորների միջև գործերի բաշխման եղանակից. դա կարող է տեղի ունենալ բացառապես մեկ դեպքում՝ եթե առկա է անհաղթահարելի ուժ ու այդ անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով: Միայն այս մեկ բացառիկ դեպքում է, որ օրենսդիրը թույլատրելի է համարել, որպեսզի գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով նույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխի դատարանի նախագահը:

Այսինքն՝ թեև Օրենսգրքի 40-րդ հոդվածը սահմանում է դատական գործերի բաշխման ընդհանուր սկզբունքներ, 41-րդ հոդվածն ամրագրում է այդ գործերի բաշխման եղանակը՝ որպես միակ թույլատրելի և հիմնական: Նշված կանոնից շեղումները օրենսդրությամբ թույլատրելի են, ինչպես նշվեց, միայն բացառիկ ու այն էլ մեկ դեպքում՝ միայն անհաղթահարելի ուժի առաջացման պարագայում:

Այսինքն՝ օրենսդիրը դատավորների միջև դատական գործերի բաշխման համար սահմանադրական օրենքի մակարդակով այն աստիճան կարևոր է համարում համակարգչային ծրագրով՝ էլեկտրոնային եղանակով գործերի բաշխումը, որ դրանից բացառության համար չափազանց բարձր շեմ է նախատեսում, այն է՝ անհաղթահարելի ուժի առկայությունը: Նման մոտեցումն ակնհայտ է, թե ինչով է պայմանավորված. դա կապված է

այն հիմնարար արժեքների բարձր պաշտպանության և այդ արժեքների ունահարման ռիսկերը չեզոքացնելու հետ, ինչը երաշխավորելու համար ընտրվել է հենց այս կարգավորումը՝ խոսքը վերաբերում է անձի արդար դատաքննության, անձնական ազատության և մյուս իրավունքների ապահովմանը: Ընդ որում, այս արժեքների պաշտպանությունն ու ռիսկերի չեզոքացումն այն աստիճան կարևոր է, որ օրենսդիրը նախատեսել է միայն մեկ բացառություն՝ անհաղթահարելի ուժ:

Սույն զեկույցի շրջանակներում համապատասխան դրույթների սահմանադրականության հարցը բարձրացվել է նաև բաշխման էլեկտրոնային եղանակից, այն է՝ համակարգչային ծրագրով բաշխումից շեղումն ամրագրող դրույթների անհստակ կարգավորումների պատճառով գործնականում դա ստանում է այնպիսի մեկնաբանություն ու կիրառություն, որ հանգեցնում է մարդու սահմանադրական իրավունքների համար հիմնային խնդիրների:

Խոսքն այն մասին է, որ քրեական գործի շրջանակներում նախաքննության ընթացքում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը դիտարկվել է որպես անհաղթահարելի ուժի առկայություն, ինչի հիմքով էլ դատական գործերի բաշխումը սկսվել է իրականացվել ոչ էլեկտրոնային կամ ոչ համակարգչային, այն է՝ դատարանի նախագահի կողմից «ձեռքով մակագրելու» եղանակով:

Եվ սա էլ այն պայմաններում, երբ խոսքը նախաքննության, այսինքն՝ որևէ ժամկետով չսահմանափակված գործընթացի մասին է, որը կարող է ունենալ անվերջանալի տևողություն: Էլ չենք խոսում հնարավոր դատաքննության տևողության մասին, որը նույնպես ժամկետներով սահմանափակված չէ. դատական համակարգի առկա ծանրաբեռնվածության պայմաններում ավելի անորոշ է դառնում, թե որքան առգրավված կմնան համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիները: Սրան էլ եթե ավելացնենք դատական բողոքարկումները, ապա հարցն ավելի խնդրահարույց է դառնում:

Ընդ որում, Բարձրագույն դատական խորհուրդն ինքը և, իհարկե, «ձեռքով» մակագրություն իրականացնող առանձին դատարանների նախագահները նույնպես չեն կարողանում ոչինչ ասել առ այն, թե երբ առգրավվումը կավարտվի: Այսինքն՝ նրանց համար նույնպես անորոշ է ստեղծված իրավիճակը: Բայց խնդիրը ոչ միայն ինքնին ժամկետների մեջ է, այլ նաև նրանում, որ թե՛ Բարձրագույն դատական խորհուրդն, թե՛ դատարանների նախագահները չեն ներկայացրել չափանիշներ, որոնք հիմք են ընդունվում գործերի բաշխման համար:

Այսինքն՝ ստացվում է, որ քրեական հետապնդման մարմնի որոշմամբ կամ որ նույնն է՝ միջամտությամբ կարող է խաթարվել երկրի արդարադատության ողջ համակարգում

գործերի բաշխման համակարգչային ծրագիրը ու ավելին, այն կարող է դիտարկվել՝ որպես անհաղթահարելի ուժ: Սա քրեական հետապնդման մարմնի բացահայտ միջամտություն է դատարանների ու դատավորների անկախության ու անաչառության սահմանադրական և միջազգային պահանջներին: Պետք է նշել, որ այս մտահոգությունը հենց այս դիտանկյունից արտահայտել են նաև մի շարք դատավորներ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված իրենց հրապարակային դիմումով: Ընդ որում, դատավորները ստեղծված իրավիճակը դիտարկել են՝ որպես Դատական օրենսգրքի անորոշ կարգավորումների արդյունք³:

Այս ամենին ավելանում են արդեն մարդու իրավունքների ամենատարբեր իրավունքների խախտումները: Ինդիքի ծավալները պատկերացնելու համար բերենք մեկ օրինակ՝ բանալիներն առգրավված են որևէ ժամկետով չսահմանափակված նախաքննությամբ: Սա նշանակում է, որ մյուս գործերով միայն նախաքննության փուլում գտնվող գործերով «ձեռքով» մակագրություններն ազդում են իրավունքների լայն շրջանակի վրա. անձնական ազատության իրավունք ձերբակալումների և կալանքների դեպքում, անձնական և ընտանեկան կյանքի իրավունք հեռախոսային խոսակցությունները վերահսկելու դեպքում, արդար դատաքննության իրավունք գործերի ըստ էության քննության (նշված դեպքերում նույնպես) դեպքում և այլն: Չպետք է մոռանալ նաև քաղաքացիական ու վարչական գործերի մասին և այլն:

Այսինքն՝ վիճակը ազդել է ՀՀ արդարադատության ողջ համակարգի վրա, այսինքն՝ ունի զանգվածային ազդեցություն անորոշ ժամկետների պայմաններում: Ազդեցությունն էլ վերաբերում է ամենառիսկային պայմաններում մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ միջամտություններին (օրինակ՝ կալանքի կամ հեռախոսային խոսակցությունների վերահսկում և այլն):

Ինչպես որոշակիորեն նշվեց վերը, Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով դատական գործերի բաշխման միակ եղանակից շեղման այնքան բարձր շեմ է նախատեսվել, որ ամրագրվել է այդ շեղման հնարավորությունը ոչ այլ բանի, քան անհաղթահարելի ուժի առկայության դեպքում:

Մինչդեռ, գործնականում որպես անհաղթահարելի ուժի առկայություն է գնահատվել զուտ քրեական գործի շրջանակներում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը: Այսինքն՝ օրենքում անհաղթահարելի ուժի բովանդակության կամ չափանիշների բացակայությունը հանգեցրել է նրան, որ դրա հաղթահարման շեմն այն աստիճան է իջեցվել, որ համակարգչային ծրագրի միջոցով մակագրության պահանջից բացառությունը դարձել է կանոն:

Մինչդեռ, այդ շեմը չէր կարող այդքան հեշտ հաղթահարելի լինել: Նախ, «անհաղթահարելի ուժ» հասկացությունն ինքը ենթադրում է մարդու կամքից անկախ վրա հասած արտակարգ իրադարձություն կամ աղետ, որ չի կարող կանխատեսվել կամ վերացվել (օրինակ՝ երկրաշարժ, պատերազմ և այլն): Դրանից բացի, պետք է հաշվի առնել այն լրջագույն ռիսկերը, որ առաջ են եկել. անորոշ ժամկետների պայմաններում ազդեցություն քրեական (այս գործերի դեպքում նաև նախաքննության ընթացքում նախնական կամ հետագա դատական վերահսկողության ենթակա հարցերը), քաղաքացիական, վարչական արդարադատության բոլոր գործերի, այդ գործերով

³ Հասանելի է https://armdaily.am/?p=163166&l=am%2F&fbclid=IwAR1Sl-eXG_N5AVLZcKiSvIS6EvnBWInMwTjhpotFg2Mp6taxzwV9qzP5Xkl հղումով:

իրավունքների միջամտությունների նկատմամբ: ԵՎ ի վերջո, ակնհայտ է, որ դատական համակարգում գործերի բաշխման էլեկտրոնային համակարգը կաթվածահար արած քրեական հետապնդման մարմինների գործողությունների մասին նախապես Բարձրագույն դատական խորհուրդն իմացել է:

Եվ այս ամենն էլ այն պայմաններում, որ դատարանների նախագահների կողմից գործերի «ձեռքով» կամ ոչ համակարգչային ծրագրով գործերի բաշխման ամրագրված չափանիշներ գոյություն չունեն (դատարանների նախագահների առանձին դիրքորոշումները ներկայացված են սույն զեկույցի հետագա շարադրանքում):

Ամփոփելով ներկայացվածը՝ ստացվում է.

- դատական գործերի բաշխման օրենսդրությամբ սահմանված պարտադիր եղանակը էլեկտրոնայինն է,

- այդ պարտադիր եղանակից շեղվելու բացառիկ և միակ նախապայմանը անհաղթահարելի ուժի առկայությունն է,

- այդ շեղումն ամրագրող կամ Դատական օրենսգրքի որևէ այլ դրույթ չի բացահայտում «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությունը,

- ինչ-որ քրեական գործի նախաքննության շրջանակներում դատական գործերի բաշխման համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը դիտարկվել է անհաղթահարելի ուժ, որի պատճառով դադարեցվել է դրա գործարկումը և դա ստացել է կիրառություն ՀՀ ողջ դատական համակարգի նկատմամբ՝ սկսած գործերի ըստ էության քննությունից մինչև քրեական գործերով մինչդատական վարույթների ընթացքում ցանկացած տեսակի միջնորդության դատական քննություն, դրա նկատմամբ նախնական կամ հետագա դատական վերահսկողություն.

- Դատական օրենսգրքը չի ապահովում հստակ լուծումներ, որոնք թույլ չէին տա քրեական հետապնդման մարմնի որոշմամբ երկրի արդարադատության ողջ համակարգի վրա ազդող և մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման հանգեցնող վիճակի ի հայտ գալը՝ այն էլ անորոշ ժամկետով: Ավելին, այդ լուծումների բացակայության և անորոշ կարգավորումների պատճառով է նաև, որ գործնականում առաջ են եկել մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից համակարգային վտանգներ պարունակող մեկնաբանություններ:

Այս ամենի մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի հետագա բաժնում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, սույն զեկույցում դատական գործերի բաշխման էլեկտրոնային եղանակից շեղումն ամրագրող դրույթների սահմանադրականության հարցը քննարկման առարկա է դարձել առանձին դատարանների նախագահների կողմից դատավորների միջև գործերի բաշխման չափանիշների ու կարգի անկատարության համատեքստում:

Գլուխ 3. Դատավորների միջև գործերի բաշխման վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումներն ու խնդրի ոչ լիարժեք կարգավորվածությունը

Ինչպես արեն վերը նշվեց, օրենսդրական կարգավորումների անկատարության հարցը «անհաղթահարելի ուժ» եզրույթի որոշակիության խնդրից զատ խնդրահարույց է նաև դատարանի նախագահի կողմից բաշխման կարգի ու չափանիշների տեսանկյունից:

Այսպես, Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում են, և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են մասնագիտացման սկզբունքի և պատահական ընտրության, ինչպես նաև նույն գլխում ամրագրված կանոնների հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող գործերը բաշխվում և վերաբաշխվում են՝ ապահովելով գաղտնիությունը:

Ըստ Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավորների միջև գործերի բաշխումը, վերաբաշխումը և կոլեգիալ դատական կազմերի ձևավորումը կատարվում են հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Համակարգչային ծրագիր), որի շահագործման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ Բարձրագույն դատական խորհուրդն ապահովում է Համակարգչային ծրագիրը մշակելը, կատարելագործելը, դրա գաղտնիությունն ու անվտանգությունն ապահովելը, Համակարգչային ծրագիրը գործարկելը և սպասարկելը:

Դրա հետ մեկտեղ, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ եթե անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել Համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով Օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:

Օրենսգրքի 9-րդ գլուխը չի պարունակում առավել մանրամասն կարգավորում, որով կբացահայտվեն Համակարգչային ծրագրի միջոցով դատավորների միջև գործերի բաշխման անհնարինության պարագայում դրանց բաշխման հարցերը: Ստացվում է, որ Օրենսգրքում առկա կարգավորումները, որոնք կիրառելի կլինեն նշված հատուկ դեպքում գործերի բաշխման չափանիշներն ու կարգը որոշելիս, Օրենսգրքի 40-րդ հոդվածով և 41-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված դրույթներն են:

Փաստորեն, վերը նշված օրենսդրական կարգավորումներով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն Համակարգչային ծրագրով դատավորների միջև գործերի բաշխումն իրականացնելու անհնարինության դեպքում դատարանի նախագահի կողմից գործերը բաշխելիս: Քննարկվող իրավակարգավորումների բովանդակությունից բխում է, որ երբ Համակարգչային ծրագրի միջոցով դատավորների միջև բաշխման անհնարինությունն առաջանում է անհաղթահարելի ուժի հետևանքով, նման պարագայում գործերը դատավորների միջև բաշխում է դատարանի նախագահը:

Միևնույն ժամանակ, բացի Օրենսգրքի կարգավորումներից դատավորների միջև գործերի բաշխման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև Որոշմամբ: Այսպես, Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի Որոշման 1-ին կետի համաձայն՝ դրա հավելված 1-ով սահմանվում է Հայաստանի Հանրապետության դատարաններում դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը:

Որոշման Հավելված 1-ի 1-ին կետով ամրագրվում են այն չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն Հայաստանի Հանրապետության դատարաններում ստացված գործերը դատավորների միջև բաշխելիս Դատական ավտոմատացված համակարգի՝ Դատական համակարգ համակարգչային ծրագրի կողմից:

Միևնույն ժամանակ, Որոշմամբ, անդրադառնալով Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անհնարինության դեպքին, դրա Հավելված 1-ի 19-րդ կետով ընդամենը սահմանվում է, որ այն դեպքում, երբ առաջանում է դատարանում գործի բաշխման անհնարինություն, ապա դատարանի (պալատի) նախագահն Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով բաշխումն իրականացնելուց հետո նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով այդ մասին անհապաղ տեղեկացնում է Խորհրդին: **Այսինքն՝ մանրամասն կարգավորում դատարանի նախագահի կողմից գործերի բաշխումն իրականացնելուն առնչվող Որոշումը չի պարունակում և համապատասխան դրույթով զուտ հղում է արվում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասին:**

Որոշման Հավելված 1-ը պարունակում է մի շարք կարգավորումներ, որոնք պետք է իրականացվեն համապատասխան ծրագրային լուծումների հետ միաժամանակ. այս մասին է վկայում Որոշման 4-րդ կետը: Մասնավորապես, ըստ Որոշման 4-րդ կետի՝ ի թիվս այլնի, Որոշման հավելված 1-ի 1-ին կետով սահմանված չափանիշների մեծ մասը՝ գործերի բաշխման հավասարությունը, առանձին տեսակի գործերի բաշխման համար օրենքով

նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելը, գործերի բարդությունը և մատչելիությունը, կարող է կիրառվել միայն ծրագրային լուծումների հետ միաժամանակ: Արդյունքում՝ ստացվում է, որ Որոշման 4-րդ կետի համաձայն՝ Հավելված 1-ի 1-ին կետով սահմանված միայն երեք չափանիշներ՝ գործերի բաշխման պատահականությունը, դատավորների մասնագիտացումը և գաղտնիությունը, կարող են կիրառվել առանց համապատասխան ծրագրային լուծումների:

Որոշման Հավելված 1-ի մնացած կարգավորումները վերաբերում են կոնկրետ և հատուկ դեպքերի և դրանց հետ կապված տալիս են հատուկ կարգավորումներ:

Գործերի բաշխման համակարգչային ծրագրի միջոցով իրականացման անհնարինության հետ կապված Որոշումը պարունակում է կարգավորում, որը, ինչպես արդեն նշվեց, ևս չի մանրամասնում դատարանի նախագահի կողմից գործերի բաշխման կարգը. Որոշմամբ հղում է կատարվում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին:

Նշվածի հետ մեկտեղ, Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով ևս հղում չի կատարվում որևէ այլ կարգի կամ չափանիշների վրա, որոնք հիմք կընդունվեն դատարանի նախագահի կողմից գործերը բաշխելիս՝ բացառությամբ 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի վկայակոչման:

Այսինքն՝ ըստ վերոգրյալի՝ բացառությամբ Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, քննարկվող անհնարինության պարագայում դատարանի նախագահի կողմից գործերը բաշխելիս հաշվի է առնվելու մի քանի ընդհանուր պահանջ և Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգը: **Միևնույն ժամանակ, այդ կարգն ամրագրող Որոշմամբ չափանիշներն ամրագրող դրույթների ձևակերպումից թեև ընկալվում է այդ պահանջների կիրառելիությունը միայն Համակարգչային ծրագրի պայմաններում: Այսինքն՝ այդ պահանջները որևէ պարագայում չեն կարող փոխարինել համակարգչային ծրագրին. դրանք տարբեր հարթություններ են: Դրա հետ մեկտեղ Որոշմամբ ամրագրվում են որոշ պահանջներ (պատահականությունը, մասնագիտացումն ու գաղտնիությունը)՝ առանց համապատասխան լուծումների: Ինչ վերաբերում է Որոշմամբ սահմանված կարգին, ապա դրանով կոնկրետ Օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված դեպքի համար այդ հոդվածով նախատեսված դրույթներից տարբերվող որևէ այլ կարգավորում չի նախատեսում:**

Դատական գործերի ավտոմատացված համակարգի համար սահմանվում են չափանիշներ ու գործերի բաշխման մանրամասն կարգ:

Ըստ Որոշման Հավելված 1-ի՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում ստացված գործերը դատավորների միջև բաշխելիս Դատական ավտոմատացված համակարգը՝ Դատական համակարգ համակարգչային ծրագիրը հիմք է ընդունում գործերի հավասարաչափ բաշխման հետևյալ չափանիշները՝

1) գործերի բաշխման պատահականությունը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործերը բաշխելիս պատահական ընտրությունը՝ առանց գործերի մուտքագրման հաջորդականությունը հաշվի առնելու,

2) գործերի բաշխման հավասարությունը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործերի բաշխման տվյալ օրվան նախորդող 365-օրյա ժամանակահատվածը՝ համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին բաշխված (հանձնված) գործերի միջին քանակի համահարթեցմանը համապատասխան,

3) դատավորների մասնագիտացումը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործերի բաշխումը դատավորի հիմնական, իսկ առկայության դեպքում՝ նաև առանձին տեսակի գործեր քննելու մասնագիտացումը հաշվի առնելով,

4) առանձին տեսակի գործերի բաշխման համար օրենքով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելը՝ օրենքով սահմանված դեպքերում Ծրագրում առանձին տեսակի գործերի բաշխումն իրականացնելով անհապաղ,

5) գործերի բարդությունը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործերի բաշխումը՝ առանձին տեսակի գործերի բարդության աստիճանից ելնելով, ընդ որում՝ բարդության աստիճանը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

6) մատչելիությունը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործերը բաշխելիս դատարանի ծառայություններից օգտվողների համար առավել մատչելի արդարադատության ապահովման նպատակով նստավայրերի սպասարկման տարածքի շրջանակներում նաև դատարանի նստավայրերի միջև հեռավորությունները հնարավորինս հաշվի առնելը,

7) գաղտնիությունը՝ Ծրագրում ապահովելով դատավորների միջև գործեր բաշխելիս, վերաբաշխելիս օրենքով պահպանվող, այդ թվում՝ պետական գաղտնիք պարունակող տվյալների գաղտնիությունը:

Այսինքն՝ Որոշմամբ, ի թիվս այլնի, նախատեսված են նաև այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են գործերի բաշխման հավասարությունը, բարդությունը, մատչելիությունը, առանձին տեսակներով պայմանավորված առանձնահատկությունները: **Վերոգրյալի համադիր վերլուծությունը կարող է հանգեցնել այն եզրակացության, որ ի տարբերություն Համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխմանն առնչվող կարգավորումների՝ դատարանի նախագահի կողմից գործերը բաշխելիս նշված չափանիշները չեն կիրառվում:** Կամ, օրինակ, Հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առաջին արյանի դատարաններում քրեական, քաղաքացիական, վարչական և սնանկության գործերը, մինչդեռ պետական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունները՝ բացառությամբ նույն որոշմամբ սահմանված դեպքերի, պատժի կատարման հետ կապված, հարկադիր բուժման տեսակի փոփոխության վերաբերյալ միջնորդությունները, դատական հանձնարարությունները, հայցի նախնական ապահովման

միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումներն անհապաղ մուտք են արվում Ծրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին, հավասարաչափ բաշխման չափանիշներին համապատասխան բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը՝ ըստ Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ սահմանված դատավորների մասնագիտացումների:

Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով դատարանի նախագահի կողմից դատական գործերի բաշխումն իրականացնելու համար սահմանված ժամկետ չկա: Այսինքն՝ դատարանի նախագահից չի պահանջվում գործերի բաշխումն իրականացնել կոնկրետ ժամկետում, ինչը ևս խնդրահարույց է: Այս խնդրին անդրադարձ կկատարվի ստորև:

Ստացվում է, որ դատարանի նախագահի կողմից գործերը բաշխելիս հաշվի է առնվում ընդամենը մի քանի ընդհանուր բնույթի պահանջ: Խոսքը վերաբերում է պատահականությանը, մասնագիտացմանն ու գաղտնիությանը, որոնք, ինչպես նշվեց, որևէ պարագայում չեն կարող փոխարինել համակարգչային ծրագրին կամ վերացնել այդ ծրագրի շնորհիվ չեզոքացվող ռիսկերը և ապահովել բաշխման գործընթացի շրջանակներում անկախությունն ու անաչառությունը. այս մասին առավել մանրամասն ներկայացվում է սույն զեկույցի հետագա շարադրանքում: Համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխումն ու այս պահանջները տարբեր հարթությունների վրա են գտնվում: Ավելին, նշված մի քանի պահանջները հիմք են ընդունվում նաև Համակարգչային ծրագրի միջոցով գործերը բաշխելիս: Դրա հետ մեկտեղ կան շատ այլ չափանիշներ, որոնք համակարգչային ծրագրի բացակայության պայմաններում հաշվի առնելը պարտադիր չէ դատարանի նախագահի կողմից բաշխումն իրականացնելիս:

Ինչպես նշվեց, Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերի բաշխման կարգը սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Մինչդեռ, վերը նշված օրենսդրական կարգավորումների բովանդակությունից վստահորեն կարող ենք հանգել այն եզրակացության, որ նշված կարգը, այն է՝ Որոշումը, սահմանում է դատական գործերի բաշխման կարգը մասամբ. այն չի պարունակում դրույթներ, որոնցով կսահմանվի քննարկվող անհնարինության դեպքում դատարանի նախագահի կողմից գործերի բաշխման կարգը:

Ասվածի կապակցությամբ հարկ է նշել, որ այս մասին են վկայում նաև Բարձրագույն դատական խորհրդի պարզաբանումները: Մասնավորապես, ըստ Բարձրագույն դատական խորհրդի՝ Համակարգչային ծրագրով դատական գործերի բաշխումն իրականացնելու անհնարինության դեպքում գործերը բաշխելու կարգը սահմանվում է Օրենսգրքի 41-րդ հոդվածով: Նշված հոդվածով սահմանված կարգավորումներից բացի, գործերի բաշխման այլ կարգ սահմանված չէ:

«Ճ մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ արձանագրել, որ Բարձրագույն դատական խորհրդի հետ հաստատված է արդյունավետ համագործակցություն: Այսինքն՝ զեկույցն այդ մասին չէ: Սույն զեկույցով բարձրացվող հարցն այլ հարթության է և վերաբերում է այլ հարթությունում մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորմանը գործնականում:

Այսպես, քննարկվող հարցի շրջանակներում «Ճ մարդու իրավունքների պաշտպանը գրավոր հարցումներ է ուղարկել Վերաքննիչ քրեական, Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ վարչական, Վարչական, Սնանկության և Երևանի ընդհանուր իրավասության դատարաններ:

Նշված դատարանների նախագահներին են ներկայացվել հարցադրումներ առ այն, թե ինչ կարգով և ինչ կոնկրետ չափանիշների հիման վրա է իրականացվում դատավորների միջև գործերի բաշխումը դատարանի նախագահի կողմից: Դատարանի նախագահը գործերի բաշխումն իրականացնում է նախապես մշակված ու քննարկված գրավոր ամրագրված չափանիշների հիման վրա, թե դրանք բանավոր են և որևէ տեղ ամրագրված չեն: Արդյոք պահպանվում է գործերի բաշխման այբբենական հերթականությունը, ինչպես դա ամրագրված է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում:

Նշված դատարաններ ուղարկված Մարդու իրավունքների պաշտպանի գրություններով պահանջվել են ներկայացնել առկայության պարագայում դատարանների նախագահների կողմից կիրառվող չափանիշներն ու հավաստող տվյալներ առ այն, որ Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված գործերի բաշխման այբբենական հերթականությունը ամբողջությամբ պահպանվում է:

Վերը նշված հարցադրումներին ի պատասխան՝ Երևանի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը տվել է պատասխան առ այն, որ դատարանում գործերի բաշխումն իրականացվում է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ դատարանի նախագահի կողմից՝ հաշվի առնելով նաև Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, ինչպես նաև Որոշմամբ սահմանված կանոններով նախատեսված հանգամանքների առկայությունը և դատավորների ծանրաբեռնվածությունը: Այլ պարզաբանումներ չեն տրամադրվել:

Վերաքննիչ քրեական դատարանի պարզաբանումների համաձայն՝ գործերի բաշխումն իրականացնում է դատարանի նախագահը՝ պահպանելով Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, այն է՝ ըստ այբբենական հերթականության՝ հիմք ընդունելով նաև Որոշմամբ սահմանված կանոնները, ինչպես նաև որոշ դատավորների վարույթում առկա երկակի և եռակի ծանրաբեռնվածությունը: Նշվածի կապակցությամբ, ըստ Վերաքննիչ քրեական դատարանի, գրավոր ապացույց տեխնիկական տեսանկյունից հնարավոր չէ ներկայացնել: Դատարանն այլ պարզաբանումներ չի ներկայացրել:

Ըստ Սնանկության դատարանի՝ գործերի բաշխումն իրականացվում է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաև Օրենսգրքի 42-րդ հոդվածի

2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, Որոշմամբ, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի ԲԴԽ-23-Ն-1 որոշմամբ⁴, Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 19-ի ԲԴԽ-61-Ն-18 որոշմամբ⁵ սահմանված պահանջները:

Վարչական դատարանի պարզաբանումների համաձայն՝ առաջնորդվելով Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ ՀՀ վարչական դատարանում դատավորների միջև գործերի բաշխումն իրականացվում է Օրենսգրքի 40-42-րդ հոդվածների, ինչպես նաև Որոշման հիման վրա՝ պահպանելով մուտքագրված գործերի հավասարաչափ բաշխման պահանջները: Մինևնույն ժամանակ, ըստ դատարանի, մակագրության այբբենական կարգը խստագույնս պահպանվում է և գործերը մակագրվում են Օրենսգրքի և Որոշման վերը նշված պահանջների պահպանմամբ, ինչը հավաստվում է նաև «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգի միջոցով՝ ըստ դատական գործերի հերթական համարների որոնման և դատավորների այբբենական մակագրության հերթականության:

Վերաքննիչ վարչական դատարանի պարզաբանումների համաձայն՝ գործերի բաշխումն իրականացվում է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաև Որոշման Հավելված 1-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատարաններում դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը» պահանջները:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանից պարզաբանումներ չեն ստացվել: Այս դատարանի կողմից որևէ պարզաբանում չտրամադրելը նշանակում է առավել խնդրահարույց է վիճակը և ակնհայտ է, որ չափանիշներ չկան այստեղ նույնպես: Բացի այս ամենից, դատարանը ցուցաբերել է բացահայտ անհարգալից վերաբերմունք և չի պատասխանել սահմանադրական իրավունքների պաշտպանությանը և դատարանների գործունեության արդյունավետությանը վերաբերող Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը:

Ակնհայտ է, որ ողջ վերը նշվածը փաստում է դատարանների նախագահների կողմից դատական գործերի բաշխման չափանիշների բացակայության մասին: Չկան հստակություն ապահովող լուծումներ կամ դրույթներն անորոշ են: Այս ամենն էլ հանգեցրել է ոչ միասնական, անորոշ մոտեցումների գործնականում կիրառելիության կամ գործնական մեկնաբանության հարցերում: Օրինակ՝ Երևանի առաջին ատյանի

⁴ Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշում

⁵ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 19-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ ԲԴԽ-61-Ն-18 որոշում

ընդհանուր իրավասության դատարանի և Վերաքննիչ քրեական դատարանի կողմից նշվում է, որ դատական գործերը բաշխելիս հաշվի է առնվում դատավորների ծանրաբեռնվածությունը առանց որոշակիացնելու այն ամրագրող օրենսդրական հիմքը:

Այս անորոշ վիճակը, դատարանների նախագահների կողմից գործերը բաշխելիս միասնական մոտեցումների բացակայությունը բացահայտ խոցելի է դարձնում դատավորներին ու դատարաններին՝ կապված արտաքին կամ ներքին միջամտությունների հետ: Սա էլ իր հերթին լուրջ վտանգներ է պարունակում մարդու իրավունքների տեսանկյունից:

Այս ամենն արտահայտված է նաև Բարձրագույն դատական խորհրդին ուղղված մի շարք դատավորների հրապարակային մտահոգություններում, որի մասին արդեն վերը նշվել է:

Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել տարբեր փաստաբանների մտահոգություններ այն մասին, որ իրավակիրառ պրակտիկայում պարզ չէ, թե ինչ չափանիշներ են կիրառվում դատական գործերի «ձեռքով մակագրության» ընթացքում: Ավելին, փաստաբանները դժգոհություններ են ներկայացրել այն մասին, որ իրավակիրառ պրակտիկայում դատական գործերը բաշխելիս չի պահպանվում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված դատավորների ազգանունների այբբենական հերթականությունը: Մասնավորապես, ըստ փաստաբանների՝ գործնականում արձանագրվել են այնպիսի դեպքեր, երբ դատական գործերը բաշխելիս նշված այբբենական հերթականությունը խախտվել է:

Այսպես, փաստաբաններից մեկը նշել է, որ իր վստահորդի բողոքի քննությունը Երևանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահը մակագրել է ինքն իրեն: Մինչդեռ, այդ գործի հետ սերտորեն կապված մեկ այլ նախորդող գործ մակագրվել է այլ դատավորի, իսկ հաջորդ գործը՝ երրորդ դատավորի: Մինչդեռ, ըստ ազգանունների այբբենական հերթականության՝ դատարանի նախագահին պետք է դատական գործ մակագրվեր նշված «երրորդ» դատավորին մակագրելուց հետո:

Մեկ այլ փաստաբան նշել է, որ ներկայացրել է օրինակ, որով ազգանունների այբբենական հերթականությունը չի պահպանվել դատական գործերի բաշխման գործընթացում:

Մակագրության հարցի հետ կապված պարզաբանում ստանալու ակնկալիքով փաստաբանը դիմել է դատարան, սակայն ըստ փաստաբանի՝ Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու օրվա դրությամբ պատասխան չի ստացել (սույն թվականի նոյեմբերի 12):

Փաստաբանը նշել է, որ գործերից մեկով դատավորն ինքնաբացարկ է հայտնել՝ **հաշվի առնելով «անաչառ դիտորդի մոտ հնարավոր կասկածը դատարանի ձևավորման իրավաչափության վերաբերյալ»:**

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումներից մեկով փաստաբանը ներկայացրել է տեղեկություն առ այն, որ Վերաքննիչ դատարանից բանավոր տեղեկացել է, որ իր վստահորդի որոշման դեմ բերված բողոքի քննությունը բողոք բերելու հաջորդ օրը մակագրվել է Վերաքննիչ քրեական դատարանի այլ դատավորի, ով ըստ դատարանների պաշտոնական կայքում առկա արձակուրդների ժամանակացույցի տվյալների՝ մինչև նույն թվականի հուլիսի 30-ը պետք է գտնվեր ամենամյա արձակուրդում: Նշվածի կապակցությամբ, փաստաբանը դիմել է դատարան բանավոր կերպով ստացած տեղեկատվության կապակցությամբ պարզաբանումներ ստանալու և 2021 թվականի հուլիսի 20-23-ն ընկած ժամանակահատվածում գործերի բաշխման ցանկում ներառված դատավորների ցուցակին և վերջիններիս այդ օրերի դրությամբ ունեցած ծանրաբեռնվածությանը ծանոթանալու նպատակով: Սրան ի պատասխան՝ դատարանից ընդամենը ներկայացվել է տեղեկություն, որ Վերաքննիչ քրեական դատարանի նշված դատավորը բողոք ներկայացնելու օրվանից հետո է կանչվել արձակուրդից, ինչից ելնելով էլ ներառվել է գործերի բաշխման ցանկում: Ինչ վերաբերում է բաշխման ցանկերին, ըստ դատարանի՝ բաշխման ցանկում ներառված են եղել այն դատավորները, ովքեր այդ ժամանակահատվածում չեն գտնվել ամենամյա հերթական կամ չվճարվող արձակուրդում:

Այսինքն՝ կոնկրետ պրակտիկայով զբաղվող և կոնկրետ գործերի հետ առնչվող փաստաբանների մտահոգությունները նաև այն մասին են, որ անգամ համակարգչային ծրագրի չգործելու դեպքում չի պահպանվում այբբենական կարգը:

Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումով մի շարք դատավորներ խնդիրը ցույց են տվել նաև այն տեսանկյունից, որ առկա են դատական գործերի բաշխման պատահականության սկզբունքի խախտման փաստարկով դատավորների դեմ ներկայացված բացարկի միջնորդություններ: Մասնավորապես, դատավորները բարձրացրել են ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության դատական գործերի բաշխման չափանիշի պահպանման հարցը, որի ոչ պատշաճ պահպանման մասին են վկայում, ըստ դիմումի, յուրաքանչյուր օր դատարան մուտքագրված և դատավորներին մակագրված գործերի քանակի համադրման արդյունքները⁶:

Դատական գործերի մակագրության գործող ընթացակարգի վերաբերյալ մտահոգություններ են ներկայացրել նաև առանձին դատավորներ՝ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անանուն հարցումներով:

Ըստ նրանց՝ մակագրությունների համակարգչային համակարգը «ձեռքով մակագրությունների» եղանակով փոխարինելու արդյունքում տևական ժամանակ է, ինչ որոշ դատավորներ այլևս չեն քննում որոշակի կատեգորիայի գործեր (օրինակ՝ գործեր, որոնք բարդ են, ունեն զգայունություն, ներկայացնում են հանրային հետաքրքրություն)՝ այդպիսիք այդ դատավորներին չմակագրելու արդյունքում: Ավելին, ըստ մի շարք դատավորների

⁶ Հասանելի է <https://armdaily.am/?p=163166&l=am> հղումով:

տեղեկությունների՝ դատարանների նախագահների կողմից մակագրության առկա համակարգը հանգեցրել է նրան, որ գործերի մակագրության վրա ազդում է նաև դատարանների նախագահների անձնական վերաբերմունքը դատավորների նկատմամբ: Դրանով էլ դատավորները կախվածության մեջ են ընկնում դատարանների նախագահներից: Արդյունքում՝ ստեղծվել է իրավիճակ, որ կան, այսպես կոչված, «դատական մեկուսացման» մեջ հայտնված դատավորներ:

Ստացվում է, որ ամիսների կտրվածքով խնդրի տևականությունը նաև որոշակի օրինաչափություն է ձևավորում կոնկրետ գործերը կոնկրետ դատավորներին մակագրելու (չմակագրելու) և մեկուսացնելու, դատավորներին կախվածության մեջ գցելու առումով:

Ստեղծված իրավիճակը, եթե անգամ վերացարկվենք կոնկրետ առանձին գործերով առանձին դատավորների անկախության սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշների դիտարկումից, արդեն իսկ անվստահության ընդհանուր մթնոլորտ է ձևավորում այդ մակագրությունների ընթացակարգի և հետևաբար, ողջ դատական համակարգի նկատմամբ: Որոշ դատավորներ անանուն հարցումներով նշել են, որ իրենք գիտեն իրավիճակներ, երբ կոնկրետ գործերի մակագրության համար անգամ դատավորներ են հետ կանչվել արձակուրդից՝ «ձեռքով» մակագրություն իրականացնելու համար:

Դատավորների այս մտահոգությունը կիսում են նաև կոնկրետ գործերով անձի իրավաբանական օգնության իրավունքն ապահովող փաստաբանները, քրեական գործերով պաշտպանները և Փաստաբանների պալատը:

Ըստ հավաստի ահազանգերի՝ Վարչական դատարանում, օրինակ, Դատարանի նախագահն ինքն է որոշում 5 դատավոր ունեցող դատական կազմերում ընդգրկվող դատավորներին՝ առանց չափանիշների, սեփական հայեցողությամբ: Խոսքը նաև դատական կազմերում հաճախ կրկնվող՝ նույն դատավորների ընդգրկելու խնդրի մասին է: Խոսքն այն էլ վերաբերում է բացառիկ զգայուն հարցերի, ինչպիսիք են, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված, թեկնածուներ գրանցելու կամ չգրանցելու հետ կապված որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերը կամ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Երևանի ընդհանուր իրավասության դատարանում, ըստ մեզ ներկայացված ահազանգերի, ընդհանրապես մակագրություններ է անում նաև դատարանի աշխատակազմի ղեկավարը՝ բացի այն, որ չկան ամրագրված չափանիշներ հենց դատարանի նախագահի համար: Նշվող պատճառն այն է, որ թե՛ ֆիզիկապես, թե՛ մասնագիտական առումով դատարանի նախագահը, այսինքն՝ մեկ մարդ, ի վիճակի չէ իրականացնել այդքան գործերի մակագրություն:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ տևական ժամանակ ստեղծվել է իրավիճակ, երբ գործերի մակագրության ընդհանուր կանոնը՝ համակարգչային եղանակով մակագրությունը չի գործում, իսկ իբրև բացառություն ամրագրված՝ **դատարանների**

**նախագահների կողմից «ձեռքով» մակագրությունների ընթացակարգը
բացառությունից վերածվել է կանոնի ու հայտնի էլ չէ, թե որքան կտևի:**

Գլուխ 4. Անկախ դատարանը՝ որպես անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ. իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակությունը. դատավորների միջև գործերի բաշխման դերը դատարանի անկախության երաշխիքի ապահովման համատեքստում

Անձի արդար դատաքննության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով: Սահմանադրությամբ երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից է դատարանի անկախությունը: Մասնավորապես, Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի *անկախ* և անաչառ *դատարանի* կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Ի ապահովումն Սահմանադրությամբ սահմանված արդար դատաքննության իրավունքի՝ դատարանների անկախության երաշխիքն ամրագրվել է նաև Օրենսգրքում: Մասնավորապես, Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

Անձի արդար դատաքննության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև միջազգայնորեն ընդունված մի շարք իրավական փաստաթղթերում: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի այն բանի, որ իր գործը քննվի *անկախ* և անկողմնակալ *դատարանի* կողմից հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, *անկախ* ու անկողմնակալ *դատարանի* կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ևս երաշխավորվում է անձի արդար դատաքննության իրավունքը: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված *անկախ* ու անաչառ *դատարանի* կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Ներպետական և միջազգային իրավական կարգավորումների համաձայն՝ արդար դատաքննության իրավունքը կարող է երաշխավորվել միայն անկախ դատարանի երաշխիքի պատշաճ ապահովման պարագայում: Ուստի, արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման հարցը պարզելիս, անհրաժեշտ է նախևառաջ պարզել դրա բաղադրատարրերի, տվյալ պարագայում դատարանների անկախության երաշխիքի առկայության հարցը:

Այս կապակցությամբ արդար դատաքննության պատշաճ երաշխավորման հարցը դիտարկվել է դատավորների միջև գործերի բաշխման գործընթացի շրջանակներում դատարանների անկախության երաշխիքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «անկախ» եզրույթը վերաբերում է դատարանի՝ մյուս ուժերից (գործադիր իշխանություն և Խորհրդարան)⁷ ինչպես նաև կողմերից⁸ անկախությանը: Մինևույն ժամանակ, «դատարանի անկախություն» հասկացությունը նշանակում է դատական իշխանությունը մյուս ուժերից առանձնացնելու համար անհրաժեշտ դատավարական երաշխիքների առկայություն⁹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առանձնացնում է չափանիշներ, որոնք հաշվի են առնվում դատարանի կողմից դատարանների անկախությունը գնահատելիս: Այսպես, երբ որոշվում է, թե արդյոք դատարանը կարող է համարվել անկախ, եվրոպական դատարանը հաշվի է առնում, ի թիվս այլնի, հետևյալ չափանիշները՝ դատարանի անդամների նշանակման կարգը, նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին

⁷ Տե՛ս Բոմարտանն ընդդեմ Ֆրանսիայի (BEAUMARTIN v. FRANCE) գործով 1994 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 15287/89, կետ 38:

⁸ Տե՛ս Սրամեկն ընդդեմ Ավստրիայի (SRAMEK v. AUSTRIA) գործով 1984 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 8790/79, կետ 42,

Նինն-Հանսենն ընդդեմ Դանիայի (NINN-HANSEN v. DENMARK) 1999 թվականի մայիսի 18-ի որոշումը, գանգատ թիվ 28972/95:

⁹ Հասանելի է https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf հղումով:

ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը և արդյոք դատարանն օժտված է անկախության արտաքին հատկանիշներով¹⁰:

Անդրադառնալով կոնկրետ դատական գործերի բաշխմանը՝ Եվրոպական դատարանն արձանագրում է, որ գործը կոնկրետ դատավորին կամ դատարան հանձնելը մտնում է ներպետական իշխանությունների՝ այդպիսի հարցերում ունեցած հայեցողական լիազորությունների շրջանակի մեջ, սակայն այն պետք է համապատասխանի 6-րդ հոդվածի 1-ին կետին և, մասնավորապես՝ դրանում ամրագրված՝ անկախության և անաչառության պահանջներին¹¹:

Ներկայացվածի հետ մեկտեղ, Եվրոպական դատարանը հստակ ընդգծում է դատական համակարգի ներսում անկախության ապահովման երաշխիքների առկայության անհրաժեշտությունը. *Դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն ազատ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից: Դատական համակարգի ներսում դատավորների անկախությունը և, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասներից անկախությունն ապահովող բավարար երաշխիքները բացակայությունը բավարար է տվյալ դատարանի անկախության և անաչառության վերաբերյալ կասկածները ողջամիտ և օբյեկտիվորեն հիմնավորված համարելու համար¹²:*

Ասվածի շրջանակներում, օրինակ, կոնկրետ գործով Եվրոպական դատարանը դատարանին անկախ համարելիս հաշվի է առել և կարևորել է դատական համակարգի պատշաճ երաշխիքներով ապահովվածությունը՝ ուղղված դատարանի նախագահների՝

¹⁰ Տե՛ս Լանգբորգերն ընդդեմ Շվեդիայի (LANGBORGER v. SWEDEN) գործով 1989 թվականի հունիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 11179/84, կետ 32,

Կլեյնը և Ուրիշներն ընդդեմ Նիդերլանդների (KLEYN AND OTHERS v. THE NETHERLANDS) գործով 2003 թվականի մայիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 39343/98, 39651/98, 43147/98 և 46664/99, կետ 190, Մոյսեյեվն ընդդեմ Ռուսաստանի (MOISEYEV v. RUSSIA) գործով 2009 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 62936/00, կետ 176

¹¹ Բոչանն ընդդեմ Ուկրաինայի (BOCHAN v. UKRAINE) գործով 2007 թվականի օգոստոսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 7577/02, կետ 71:

¹² Տե՛ս Ագրոկոմպլեկսն ընդդեմ Ուկրաինայի (AGROKOMPLEKS v. UKRAINE) գործով 2012 թվականի մարտի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23465/03, կետ 137,

Պարլով-Տկալչիչն ընդդեմ Խորվաթիայի (PARLOV-TKALCIC v. CROATIA) 2010 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 24810/06, կետ 86,

Դակտարասն ընդդեմ Լիտվայի (DAKTARAS v. LITHUANIA) 2001 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, կետ 36,

Մոյսեյեվն ընդդեմ Ռուսաստանի (MOISEYEV v. RUSSIA) գործով 2009 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 62936/00, կետ 184:

գործերը դատավորներին հանձնելու (վերահանձնելու) պարտականությունը կամայականորեն կատարելու դեմ: Կոմսության դատարանի դատավորները համարվել են այդ դատարանի նախագահից բավականին անկախ, քանի որ դատարանի նախագահները կատարել են միայն վարչական (կառավարչական և կազմակերպչական) գործառույթներ, որոնք հստակորեն առանձնացված են եղել դատական գործառույթից¹³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կոնկրետ գործով քննարկելով դատարանի անկախության հարցը գործերի բաշխումը դատարանի նախագահի կողմից իրականացնելու պարագայում, նշել է, որ դատարանի նախագահն իրականացում է միայն վարչական գործառույթներ (կառավարման և կազմակերպման), որոնք խիստ տարանջատված են դատական գործառույթից, այն է՝ կոնկրետ գործերով արդարադատության իրականացումից: Ուստի, տվյալ պարագայում դատարանի նախագահը չէր կարող օգտվել իր հիերարխիկ դիրքից դատական կազմի անդամներին զեկուցող հրահանգներ տալու կամ գործով որոշում կայացնելու նպատակով:

Այսպես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև դատական գործերի բաշխման գործառույթը վերապահված է եղել դատարանի նախագահին, այդ պահին գործող օրենսդրությունը պարունակել է նորմեր, որոնք կարգավորել են դատական գործերի բաշխման հարցերը, ուստի գործերի բաշխումը չի իրականացվել դատարանի նախագահի հայեցողությամբ: Մասնավորապես, գործերը նախապես դասավորվել են ըստ ժամանակագրական հաջորդականության, այնուհետև մակագրվել են կազմի նախագահին ըստ այբբենական հաջորդականության, որն էլ իր հեթին ըստ այբբենական հաջորդականության մակագրել է կազմի անդամ դատավորներից մեկին: Նշված կարգավորումից բացառությունն ու վերաբաշխման դեպքերը ևս հստակ սահմանված են եղել: Միևնույն ժամանակ, օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանի նախագահի կողմից վերը նշված բաշխման կանոնները խախտելը հիմք է վերջինիս լիազորությունների դադարեցման համար: Ուստի, ըստ Եվրոպական դատարանի, գործող օրենսդրությունն ապահովել է դատարանի նախագահի՝ դատավորների միջև գործերի բաշխման գործառույթի հայեցողական ու կամայական իրականացումը բացառող բավարար երաշխիքներ:

Ներկայացվածից բացի, Եվրոպական դատարանը հստակ արձանագրել է, որ պետք է հաշվի առնել, որ դատավորների գործունեության ցանկացած կառավարում որոշակի վտանգ է պարունակում նրանց ներքին անկախության համար:

Դատական անկախության էությունը բացահայտվել է միջազգային մի շարք այլ փաստաթղթերում ևս: Հաշվի առնելով դատական գործերի բաշխման նշանակությունը դատարանների անկախության երաշխավորման հարցում՝ միջազգային այլ փաստաթղթերով

¹³ Տե՛ս Պարլով-Տկալչիչ ընդդեմ Խորվաթիայի (PARLOV-TKALCIC v. CROATIA) 2010 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 24810/06, կետ 88-95:

ամրագրվել են մի շարք չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն դատավորների միջև գործերը բաշխելիս և այդ հարաբերությունները կարգավորելիս:

Այսպես, «Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների 1-ին կետի համաձայն՝ պետության կողմից պետք է երաշխավորվի դատական համակարգի անկախությունը¹⁴:

Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքները ¹⁵ հատուկ ընդգծում են անկախ և անկողմնակալ դատական համակարգ ունենալու կարևոր նշանակությունը: Բանգալորյան սկզբունքներով ամրագրվում են դատական իշխանության կարևորագույն արժեքներ ու սկզբունքներ, որոնց թվում է դատարանի անկախությունը¹⁶: Նշվածն էլ իր հերթին նշանակում է, որ դատավորն իր դատական գործառույթներն իրականացնելիս անկախ է և զերծ որևէ աղբյուրից կամ որևէ պատճառով գործադրվող ուղղակի կամ անուղղակի արտաքին ցանկացած ազդեցությունից, շահադրդումից, ճնշումից, սպառնալիքից և միջամտությունից: Դատական պարտականությունները կատարելիս դատավորն անկախ է դատական գործընկերներից այն որոշումների հարցերում, որոնք դատավորը պարտավոր է ինքնուրույն կայացնել:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) Դատավորների Մագնա Կարտայի¹⁷ 2-րդ կետով ընդգծվում է, որ դատական անկախությունն ու անկողմնակալությունը անհրաժեշտ նախապայման են արդարադատության իրականացման համար: Մագնա Կարտայի 3-րդ կետն ամրագրում է, որ դատական իշխանության անկախությունը պետք է երաշխավորվի այլ իշխանական ճյուղերի, արդարադատության ձգտողների, այլ դատավորների և, ընդհանուր առմամբ, հասարակության համար՝ ամենաբարձր մակարդակի ազգային օրենսդրությամբ: Պետությունը և յուրաքանչյուր դատավոր պարտավոր են խրախուսել և պաշտպանել դատարանների անկախությունը:

Միևնույն ժամանակ, նույն փաստաթղթի 10-րդ կետն ամրագրում է, որ արդարադատության իրականացման ընթացքում դատավորն առաջնորդվում է միայն օրենքով և չի ենթարկվում որևէ հրամանի, հրահանգի կամ այլ հիերարխիկ ճնշման: Դատավորների Մագնա Կարտայի 11-րդ կետի համաձայն՝ դատավորները պարտավոր են ապահովել հավասարություն պաշտպանական և մեղադրող կողմերի միջև: Դատախազի անկախությունը իրավունքի գերակայության հիմնարար պահանջն է:

Նշվածն իր ամրագրումն է ստացել նաև ԵԴԽԽ «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1

¹⁴ Տե՛ս «Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները, հասանելի է <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx> հղումով:

¹⁵ Տե՛ս Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքներ, հասանելի է https://www.unodc.org/pdf/crime/corruption/judicial_group/Bangalore_principles.pdf հղումով:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, արժեք 1:

¹⁷ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) Դատավորների Մագնա Կարտա, հասանելի է <https://rm.coe.int/2010-ccje-magna-carta-anglais/168063e431> հղումով:

կարծիքում¹⁸ որով ընդգծվել է, որ հիմնարար դրույթ է այն, որ իր գործառույթները կատարելիս դատավորը ոչ մեկի աշխատողը չէ. նա պետական պաշտոն զբաղեցնող անձ է: Նա ծառայում է օրենքին և պատասխանատու է միայն օրենքի առաջ: Աքսիոմա/Անվիճելի է, որ որևէ գործի առնչությամբ որոշում կայացնող դատավոր չպետք է ընդունի դատական համակարգի ներսում կամ համակարգից դուրս որևէ երրորդ անձի հրաման կամ կարգադրություն¹⁹:

Միաժամանակ, զեկույցում ԵԴԽԽ-ն արձանագրում է, որ դատական իշխանության անկախության համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում դատական համակարգի ներքին հիերարխիան²⁰:

ԵԴԽԽ-ն իր «Դատարանի նախագահի դերի վերաբերյալ» թիվ 19 կարծիքում²¹ հաստատում է, որ *իրենց գործառույթներն իրականացնելիս դատարանների նախագահները պահպանում են դատարանի և առանձին դատավորների անկախությունը և անաչառությունը*²²: *Դատարանների նախագահների հիմնական պարտականությունը, սակայն, մնում է որպես դատավորների և, ընդհանուր առմամբ, նաև դատարանի անկախության ու անաչառության երաշխավոր հանդես գալը*²³:

Ավելին, նույն կարծիքով ԵԴԽԽ-ն, առավել մանրամասն անդրադառնալով դատական համակարգի ներսում դատավորների անկախությանը և թիրախավորելով կոնկրետ դատարանի նախագահի և դատավորների փոխհարաբերությունների հիմքում ընկած սկզբունքները, վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ դատական ներքին անկախության սկզբունքով պահանջվում է, որ *դատավորներն ազատ լինեն դատարանի նախագահի կողմից փրվող հրահանգներից և ճնշումներից, երբ դատական գործեր են քննում*: Դատարանների նախագահները, որոնք հանդիսանում են դատարանի անկախության, անաչառության և արդյունավետության երաշխավորներ, իրենք պետք է հարգեն դատարաններում դատավորների ներքին անկախությունը²⁴:

Ուստի, առանցքային կարևորություն ունի այն, որ դատարանների նախագահները կառավարեն դատարանները դատական իշխանության հիմնարար սկզբունքներին համապատասխան²⁵:

¹⁸ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 կարծիքը, հասանելի է <https://rm.coe.int/1680747830> հղումով:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, կետ 64:

²⁰ Տե՛ս նույն տեղում, կետ 66:

²¹ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) «Դատարանի նախագահի դերի վերաբերյալ» թիվ 19 կարծիքը, հասանելի է <https://rm.coe.int/1680748232> հղումով:

²² Տե՛ս նույն տեղում, կետ 6:

²³ Տե՛ս նույն տեղում, կետ 7:

²⁴ Տե՛ս նույն տեղում, կետ 13:

²⁵ Տե՛ս նույն տեղում կետ 14:

Անդրադառնալով դատավորների միջև գործերի բաշխման չափանիշներին՝ «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականում²⁶ շեշտվում է, որ **դատավորների միջև գործերի բաշխումը պետք է իրականացվի նախապես հաստատված օբյեկտիվ չափանիշների հիման վրա, որն էլ կերաշխավորվի անկախ և անկողմնակալ դատարանի իրավունքը**: Գործերի բաշխման գործընթացը չպետք է կրի կողմերի կամ գործի ելքով շահագրգռված որևէ այլ անձի ազդեցությունը: Գործերի վերաբաշխումը պետք է իրականացվի բացառապես հիմնավոր պատճառով և դրա մասին որոշումները պետք է ընդունվեն հստակ ու նախապես սահմանված օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ թափանցիկ ընթացակարգով: Դատավորի բացառիկ իրավասությունն է կոնկրետ գործով որոշումների կայացումը:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Եվրոպայի Խորհրդի «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդման մասին» գործողությունների ծրագրով²⁷ դատավորների անկախությունը պաշտպանելու և վերջիններիս անաչառությունը երաշխավորելու վերաբերյալ միջոցառում է նախատեսվել: Նշվածը նպատակ է հետապնդում սահմանափակել դատավորների որոշում կայացման գործընթացում դատական հիերարխիայի միջամտությունն ու համապատասխան երաշխիքների միջոցով ապահովել դատավորների անկախությունը դատարանների նախագահներից:

ԵԴԽԽ-ն իր թիվ 19 կարծիքում, հիմք ընդունելով «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդման մասին» Եվրոպայի Խորհրդի գործողությունների ծրագիրը, արձանագրում է, որ վերը նշված չափանիշները պետք է հաշվի առնվեն դատարանների նախագահների կողմից դատական գործերը բաշխելիս:

Վերոշարադրյալն իր հերթին վերահաստատվել է նաև Դատական անկախության վերաբերյալ փորձագիտական զեկույցում²⁸՝ հատուկ ընդգծելով դատական անկախության սկզբունքի պահպանման կարևորությունը ու ուշադրությունը հրավիրելով դատական գործերի հայեցողական բաշխմամբ դատարանների վրա հնարավոր ազդեցության վրա:

²⁶ Տե՛ս «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականը, հասանելի է <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d> հղումով:

²⁷ Տե՛ս «Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդման մասին» Եվրոպայի Խորհրդի գործողությունների ծրագիրը (CM(2016)36final), կետ 24, հասանելի է <https://rm.coe.int/1680700285> հղումով:

²⁸ Տե՛ս Արևելյան գործընկերության երկրներում դատական բարեփոխումների տարածաշրջանային երկխոսության շրջանակներում աշխատանքային խմբի՝ դատական անկախության վերաբերյալ 2016 թվականի սեպտեմբերի 19-ի փորձագիտական զեկույցը, կետեր 34-36, հասանելի է <https://rm.coe.int/1680700f3a> հղումով:

Կիւսյան հանձնարարականները²⁹, անդրադառնալով դատարանների նախագահների դերին, ամրագրում է, որ վերջիններիս դերը պետք է խստորեն սահմանափակված լինի. նրանք պետք է ստանձնեն միայն այնպիսի դատական գործառույթներ, որոնք համարժեք են դատարանի այլ անդամների կողմից իրականացվող գործառույթներին: Դատարանի նախագահը չպետք է միջամտի այլ դատավորների կողմից դատական որոշումների կայացմանը և չպետք է մասնակցի դատավորների ընտրությանը: Դատարանի նախագահը չպետք է կարողանա ազդել վարձատրության վրա: Նրանք կարող են ունենալ ներկայացուցչական և վարչական, այդ թվում՝ ոչ դատական աշխատողների նկատմամբ հսկողության գործառույթներ: Վարչական գործառույթները կատարելու համար անհրաժեշտ է կառավարչական կարողությունների զարգացման համար նախատեսված վերապատրաստում: Դատարանների նախագահները չպետք է դատարանի ռեսուրսները բաշխելու՝ իրենց իրավասությունները չարաշահեն դատավորների նկատմամբ ազդեցություն գործադրելու նպատակով³⁰:

Նույն փաստաթղթի համաձայն՝ վարչական այն որոշումները, որոնք կարող են ազդել գործի՝ ըստ էության լուծման վրա, չպետք է վերապահված լինեն դատարանի նախագահի բացառիկ իրավասությանը: Նման որոշման օրինակ է գործերի բաշխումը, որը պետք է իրականացվի կամ պատահական կարգով, կամ՝ կանխորոշված, հստակ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնք կսահմանվեն դատարանի դատավորների կոլեգիայի կողմից: Գործերի բաշխման սահմանված մեխանիզմի աշխատանքին միջամտելն անթույլատրելի է³¹:

Միջազգային իրավական մի շարք կարգավորումներ սահմանում են դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախության երաշխավորման անհրաժեշտությունը: Կոնկրետ գործերով ցանկալի արդյունք ստանալու հավանական եղանակներից մեկն այդ գործերն այնպիսի դատավորների հանձնարարելն է, ովքեր որոշում կկայացնեն հօգուտ որոշակի շահերի համար: Նման անօրինակ միջամտությունները կանխելու նպատակով «Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքների 14-րդ կետով ամրագրվում է, որ դատարանի ներսում դատավորների միջև գործերի բաշխումը դատական ադմինիստրացիայի ներքին խնդիրն է³²:

²⁹ Տե՛ս «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության մասին. դատական վարչարարություն, դատավորների ընտրություն և հաշվետվողականություն» ԵԱՀԿ կիսյան հանձնարարականները (2010թ.), հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/a/3/73487.pdf> հղումով:

³⁰ Տե՛ս նույն տեղում, կետ 11:

³¹ Տե՛ս նույն տեղում կետ 12:

³² Տե՛ս «Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները, հասանելի է <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/independencejudiciary.aspx> հղումով:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն (Վենետիկի հանձնաժողով) իր մի շարք դիրքորոշումներով³³ կարևորել է դատարանի անկախության դերը մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության համատեքստում՝ դրանցում ամրագրելով դատավորների վրա ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ազդեցություն գործելու անթույլատրելիությունը:

Այս համատեքստում Վենետիկի հանձնաժողովը կարևորում է դատարանների նախագահների լիազորությունների դիտարկումը, որոնց վրա գործադիր իշխանությունները կարող են հատուկ ճնշում գործադրել: **Ըստ Հանձնաժողովի՝ գործերի բաշխումը չպետք է ազդեցություն կրի կողմերի կամ գործի ելքով շահագրգռված որևէ այլ անձի ցանկությունից, ուստի նման բաշխումը, օրինակ, կարող է իրականացվել վիճակահանությամբ կամ ավտոմատացված համակարգի միջոցով այբբենական կարգով նմանատիպ այլ համակարգի համապատասխան:**

Ավելին, Վենետիկի հանձնաժողովը դատավորների անկախության չափանիշի ապահովման նպատակով խստորեն պահանջում է պահպանել անաչառության բարձր մակարդակ նաև գործերի վերաբաշխման գործընթացում. ըստ Հանձնաժողովի՝ գործը չի կարող վերաբաշխվել առանց հիմնավոր պատճառի (օրինակ՝ լուրջ հիվանդություն կամ շահերի բախում): Վերաբաշխման հիմքերն ու ընթացակարգը պետք է սահմանված լինեն օրենքով և չպետք է ազդեցություն կրեն իշխանության կամ վարչակազմի որևէ շահից: Վերաբաշխման որոշումը պետք է կայացնի այնպիսի մարմին, որն օժտված է դատավորին հավասար անկախությամբ: Որոշ սահմանադրություններ (Ավստրիա, Չեխիա, Գերմանիա, Իտալիա, Սլովակիա) առավել համապարփակ կերպով ամրագրել են «natural judge»-ի սկզբունքը, որը պահանջում է, որ գործերի բաշխումն իրականացվի վերացական (abstract) սկզբունքների հիման վրա առանց դատարանի նախագահի որևէ հայեցողության տեղ թողնելու³⁴:

³³ Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2002 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ (CDL-AD(2002)026 կարծիքը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)026-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)026-e) հղումով, 2008 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ CDL-JD(2008)002* կարծիքը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2008\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2008)002-e) հղումով,

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի մարտի 12-13-ի «Դատական համակարգի անկախության. Մաս 1. Դատավորների անկախություն» վերտառությամբ թիվ CDL-AD(2010)004 գեկույցը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)004-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)004-e) հղումով:

³⁴ Տե՛ս Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2008 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ CDL-JD(2008)002* կարծիքը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD\(2008\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-JD(2008)002-e) հղումով:

Վենետիկի հանձնաժողովն իր 2010 թվականի դատավորների անկախության վերաբերյալ կարծիքում³⁵ առավել մանրամասն է անդրադարձել գործերի բաշխման չափանիշներին:

Այսպես, վերոշարադրյալի հետ մեկտեղ, Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ որոշ ազգային օրենսդրություններում գործերի բաշխումը վերապահված է դատարանների նախագահներին: Մինչդեռ, **նման լիազորությունը իր մեջ կրում է հայեցողականության տարրեր, որը կարող է գործադրվել դատավորների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով՝ ծանրաբեռնելով վերջիններիս կամ վերջիններիս հանձնելով միայն ցածրակարգ գործեր: Նույնիսկ հնարավոր են դեպքեր, երբ դատարանների նախագահները քաղաքական զգայունություն ունեցող գործերը հանձնարարեն կոնկրետ դատավորների և խուսափեն դրանք մակագրել այլ դատավորների: Սա կարող է շատ արդյունավետ միջոց լինել գործերի ելքի վրա ազդեցություն ունենալու համար:**

Հանձնաժողովը շեշտում է, որ դատավորների անկախությունն ու անաչառությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է, որ դատավորներին գործերի մակագրության կարգը որոշվի ընդհանուր չափանիշի հիման վրա: Դա կարող է լինել այբբենական կարգով կամ համակարգչային համակարգով կամ գործերի կատեգորիաների օբյեկտիվ չափանիշի հիման վրա: Ընդհանուր կանոնները (ներառյալ բացառությունները) պետք է սահմանված լինեն օրենքով կամ օրենքով սահմանված հատուկ կարգավորումներով, օրինակ՝ դատարանի նախագահի կամ նախագահության կողմից սահմանված ներքին կարգավորումներով: Միշտ չէ, որ հնարավոր կլինի մշակել ամբողջական համապարփակ աբստրակտ համակարգ, որը կկազմակերպի գործերի բաշխումը՝ առանց տեղ թողնելու անհատական գործերով բաշխման դեպքերի համար: Կարող են լինել դեպքեր, երբ պետք է հաշվի առնել ծանրաբեռնվածությունը կամ մասնագիտացումը: Հատկապես բարդ իրավական հարցերը կարող են պահանջել այնպիսի դատավորների մասնակցություն, ովքեր փորձառու են այդ ոլորտում: Ավելին, խելամիտ կլինի նոր նշանակված դատավորներին առավել փորձառու դատավորների հետ դատական կազմում ներառելը որոշակի ժամանակահատվածով, բարդ կամ ուղենշային գործով սկզբունքային որոշում կայացնելու համար ավագ դատավորների մասնակցությունն ապահովելը: Մինչդեռ, դատարանի նախագահի կամ նախագահության կողմից նմանատիպ որոշում կայացնելու չափանիշները պետք է հստակ և նախապես սահմանված լինեն: Ավելին, առավել ընդունելի է բաշխումը վերանայելու կառուցակարգերի ու ընթացակարգերի նախատեսումը:

³⁵ Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի մարտի 12-13-ի «Դատական համակարգի անկախության. Մաս 1. Դատավորների անկախություն» վերտառությամբ թիվ CDL-AD(2010)004 զեկույցը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)004-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)004-e) հղումով:

Ամփոփելով՝ **Վենետիկի հանձնաժողովը խստորեն պահանջում է, որ դատավորներին գործերի բաշխումը պետք է հնարավորինս հիմնված լինի օրենքով կամ օրենքի հիման վրա սահմանված հատուկ կանոնակարգերով նախապես հաստատված օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների վրա**, օրինակ. դատարանի կանոնակարգում:

Միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված անձի արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքներից բխում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է լինի նախապես հաստատված և վերանայման ենթակա որոշում, թե որ դատավորն է քննելու գործը: Ուստի, կարևոր է, որ գործերի բաշխման ընթացակարգը լինի լավ կազմակերպված և թափանցիկ³⁶:

Դատական խորհուրդների եվրոպական ցանցը, կարևորելով դատական գործերի բաշխման նշանակալից դերը դատական համակարգի անաչառության և անկախության հարցում, իր զեկույցում³⁷ անդրադարձել է դատավորների միջև գործերի բաշխման չափորոշիչներին և սահմանել է 11 չափորոշիչ, որոնք պետք է հաշվի առնվեն դատական գործերը բաշխելիս:

Զեկույցն ընդգրկում է այնպիսի չափորոշիչներ, որոնք ուղղված են հաստատելու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված իրավունքի երաշխավորումը: Ըստ զեկույցի՝ գործերի բաշխման եղանակը պետք է երաշխավորի արդար և ժամանակին արդյունավետ արդարադատության իրականացումն ու բարձրացնի հասարակության վստահությունը: Պետք է լինի հստակ սահմանված բաշխման եղանակ: Զեկույցում ամրագրված սկզբունքներն ու չափորոշիչները վերաբերելի են բոլոր, այդ թվում՝ Նախագահների կողմից բաշխման դեպքերի համար: Միևնույն ժամանակ, ըստ զեկույցի, գործերը բաշխելիս պետք է հաշվի առնվեն մի շարք չափանիշներ՝ արդար դատաքննության իրավունքը, դատական անկախությունը, ընթացակարգի օրինականությունը, գործի բնույթն ու բարդությունը, իրավասությունը, փորձն ու մասնագիտացումը, դատավորի հասանելիությունն ու ծանրաբեռնվածությունը, դատավորի անաչառությունը, գործերի բաշխման անաչառության և անկախության երաշխավորման նկատմամբ հանրային ընկալումը³⁸:

³⁶Տե՛ս Դատական խորհուրդների եվրոպական ցանցի «Դատական նվազագույն չափորոշիչներ IV. Դատական գործերի բաշխում» վերտառությամբ 2013-2014 թվականի զեկույցը, հասանելի է https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/ency_report_standards_iv_allocation_of_cases_2014.pdf հղումով:

³⁷ Տե՛ս նույն տեղում:

³⁸ Տե՛ս նույն տեղում:

Եվրոպական հանձնաժողովի «Հայաստանի դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ» 2017 թվականի զեկույցի³⁹ համաձայն՝ գործերի պատահական բաշխման ավտոմատացված համակարգն ուղղված է դատական երաշխիքների ապահովմանը: Գործերի բաշխումն իրականացվում է ոչ թե վիճակահանությամբ, այլ ավտոմատ կերպով համակարգի միջոցով: Ձեկույցում նշվում է, որ ըստ երևույթին, գործերի բաշխման ավտոմատացված համակարգը բաց չէ ապօրինությունների համար, քանի որ հնարավոր չի լինի միջամտել գործերի պատահական բաշխման ընթացակարգերին: Այնուամենայնիվ, այն հանգամանքը, որ գործերի բաշխումն անմիջապես դրանց մուտքագրման պահին չի իրականացվում, այլ իրականացվում է ավելի ուշ՝ երեկոյան (ժամը 20:30-ին) շահարկումների տեղիք է տալիս: Բացի այդ, շատ դատարաններում գործում են ընդամենը մի քանի դատավորներ, ուստի պատահականության գործոնը այստեղ այնքան էլ, ըստ էության, կիրառելի չէ:

Վերոգրյալից ելնելով՝ զեկույցում առաջարկվում է ապահովել ընթացակարգեր, որպեսզի գործերի բաշխվեն անմիջապես, ինչպես նաև գործերի բաշխման ավտոմատացված համակարգում ներդնել գործերի բարդության չափանիշը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք վստահաբար պնդել, որ գործերի բաշխման չափանիշները և դրանց կարգավորմանն ուղղված օրենսդրական ընթացակարգերը պետք է հստակ և նախապես ամրագրված լինեն օրենսդրությամբ՝ թափանցիկության և օբյեկտիվության պահանջներին համապատասխան: Դատավորների միջև գործերի բաշխումը պետք է իրականացվի այնպիսի չափանիշների հիման վրա, ինչպիսիք են, օրինակ, գործերի մուտքագրման հերթականությունը, դատավորների ազգանունների այբբենական հերթականությունը, գործերի բարդությունը և այլն: Այդ չափանիշները պետք է ամրագրված լինեն ցանկացած պարագայում՝ օբյեկտիվ երաշխիքներով չեզոքացնելու համար վերը նկարագրված վտանգները:

³⁹ Տե՛ս Եվրոպական հանձնաժողովի «Հայաստանի դատական իշխանության արդյունավետության վերաբերյալ» 2017 թվականի զեկույցը, հասանելի է https://www.moj.am/storage/uploads/001.Final_Efficiency-Judiciary_Quintavalle-2.pdf հղումով:

**Գլուխ 5. Քննարկվող դրույթներով նախատեսված կարգավորումների
անկատարությունը, իրավակիրառ պրակտիկայում դրանց հնարավոր խնդիրները .
խնդրի դիտարկումը սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների
ապահովման համատեքստում**

Զեկույցի սույն գլխում դատարանների նախագահների կողմից դատավորների միջև գործերի բաշխման ընթացակարգերի ու չափանիշների լիարժեքության հարցը դիտարկվել է Սահմանադրությամբ ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի պատշաճ ապահովման տեսանկյունից:

Դատավորների միջև գործերի բաշխումն ունի կարևորագույն դեր դատարանի անկախության երաշխիքի ապահովման հարցում: Գործերի բաշխման իրականացման վերաբերյալ պահանջներն ու չափանիշները հենց վկայությունն են այն բանի, որ անկախ դատարանի երաշխավորումը հնարավոր է միայն այդ գործառույթի պատշաճ իրականացման պարագայում:

Ինչպես արդեն նշվեց վերոշարադրյալում, թեև հնարավոր չէ ապահովել այնպիսի համակարգ, որը ամբողջովին զերծ կլինի ռիսկերից ու վտանգներից, սակայն հնարավոր է ամրագրել հստակ կարգավորումներ ու օբյեկտիվ չափանիշներ, որոնց առկայությունը նվազագույնի կհասցնի դատական անկախության երաշխավորմանը սպառնացող վտանգերը:

Այսինքն՝ դատարանի անկախությունը բավարար չափով երաշխավորված կարող է լինել այն պարագայում, երբ պետության կողմից բավարար և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն վերը շարադրված չափանիշներին ու պահանջներին համապատասխան օրենսդրական ու իրավական կառուցակարգեր ու ընթացակարգեր սահմանելու ուղղությամբ:

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանն, անդրադառնալով դատարանների անկախությանը, նշել է, որ Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար⁴⁰:

Մինևույն ժամանակ, դատավորների անկախությունը նրանց սեփական շահերի համար տրված բացարձակ իրավասություն կամ արտոնություն չէ: Այն բխում է իրավունքի

⁴⁰ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՍԴԴ-647 որոշումը

գերակայության և այն անձանց շահերից, որոնք փորձում են օգտվել արդարադատությունից և արդարադատություն են ակնկալում⁴¹:

Ուստիև, պետության կողմից դատական անկախության երաշխավորումը պետք է բովանդակի ոչ միայն համապատասխան քայլերի ձեռնարկումը, այլև հասարակության՝ դատարանի անկախության, այդ թվում՝ գործերի բաշխման կամայականության ու հայեցողականության բացառման, երաշխավորման նկատմամբ հանրային ընկալումն ու բարձր վստահությունը, ինչն էլ կարող է լինել արդարադատության պատշաճ իրականացման և իրավունքի գերակայության ապահովման իրական առիավատչյան:

Ասվածից բխում է, որ թեև պետության հայեցողությանն է թողնված անկախ դատարանի երաշխիքի ապահովման համար մի շարք հարցերի ընտրությունը, ինչպես տվյալ պարագայում գործերի բաշխման եղանակի ընտրության հարցն է, այնուամենայնիվ վերոնշյալը չի նշանակում, որ պետությունները ամբողջովին ազատ են գործերի բաշխման հարցերը կարգավորելիս. պետությունները պարտավոր են ապահովել գործերի բաշխման եղանակի համապատասխանությունը անձի արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական ու միջազգային իրավական բովանդակությունից բխող և այդ իրավունքի իրացման պատշաճ ապահովման համար անհրաժեշտ չափանիշներին:

Միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ դատավորների միջև գործերի բաշխումը պետք է իրականացվի բացառապես դատավորների անկախության սկզբունքի հիման վրա, ինչը ենթադրում է, ի թիվս այլնի, նշված սկզբունքի դատական համակարգի ներսում դատավորների անկախության սկզբունքը խաթարող ցանկացած տեսակի միջամտության բացառում: Դատական ներքին անկախության երաշխավորման համար առավել ընդունելի տարբերակ է գործերի բաշխման իրականացումը էլեկտրոնային կամ ավտոմատացված համակարգերի միջոցով, ինչի արդյունքում դատական գործերի բաշխումն իրականացնելիս մարդկային գործոնի դերը նվազ նշանակության կլինի կամ ընդհանրապես կբացակայի:

Ի տարբերություն դատական գործերի՝ ավտոմատացված համակարգերի միջոցով բաշխման եղանակի՝ դատարանների նախագահների կողմից գործերի բաշխումն իրականացնելը իր մեջ պարունակում է հնարավոր կամայականության ու հայեցողականության մեծ ռիսկեր: Ասվածի հետ մեկտեղ, միջազգային իրավական փաստաթղթերում չի բացառվում դատավորների միջև գործերի բաշխման իրականացումը դատարանների նախագահներին վերապահելու հնարավորությունը:

Դատավորների միջև գործերի բաշխման նման եղանակի պարագայում համապատասխան չափանիշների ու հայեցողականության բացառմանն ուղղված մանրամասն կարգավորումների նախատեսումը առավել քան անհրաժեշտ է մարդու

⁴¹ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 կարծիքը, կետ 10, հասանելի է <https://rm.coe.int/1680747830> հղումով:

իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության շրջանակներում պետության ստանձնած պարտավորությունների պատշաճ իրականացման համար:

Ուստի, դատարանների անկախության երաշխավորմանն ուղղված միջազգային իրավական փաստաթղթերը բովանդակում են այնպիսի չափանիշների նախատեսման անհրաժեշտություն, ինչպիսիք են գործերի բաշխման պատահականությունը, դատավորների մասնագիտացումը, գործերի բաշխման ավտոմատացված եղանակը, գործերի մուտքագրման հերթականությունը, մուտքագրման պահին անմիջապես բաշխումը, բաշխման թափանցիկությունը, բաշխումն՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության:

Միևնույն ժամանակ, նույն փաստաթղթերով ամրագրվում է, որ վերոնշյալի հետ մեկտեղ, առավել քան անհրաժեշտ է, որպեսզի գործերի բաշխման վերը նշված չափանիշները լինեն օբյեկտիվ, նախապես հաստատված լինեն օրենքով կամ դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտով, ձևակերպված լինեն առավելագույնս հստակ և մանրամասն՝ բացառելով սահմանված կանոններից շեղման հնարավորությունը դատական գործերի բաշխման գործընթացին միջամտելու և դրանով գործի ելքի վրա ազդեցություն ունենալու նպատակով, ինչպես նաև ապահովելով հանրության վստահության բարձր աստիճան դատավորների միջև գործերի բաշխման գործընթացում վերջիններիս անկախության պահպանման և այդ գործընթացի անկողմնակալության ու անաչառության հարցում:

Այս առումով, պետք է հստակ արձանագրել, որ համապատասխան չափանիշների զուտ ամրագրումը օրենսդրական մակարդակում, չի երաշխավորում դատավորի անկախության երաշխիքի բավարար չափով ապահովվածություն: Ուստի, խիստ կարևոր է այդ չափանիշների կիրառելիությանն ուղղված հստակ ու մանրամասն կառուցակարգերի ու ընթացակարգերի նախատեսումը:

Ասվածի շրջանակներում, տեղին է այն դիտարկումը, որ դատարանի անկախության երաշխավորման համար արդարադատության իրականացումը պետք է անկախ դիտորդի համար տեսանելի լինի⁴²: Մինչդեռ, դատարանների նախագահների կողմից գործերի բաշխման չափանիշների և կարգի անկատարությունը՝ պայմանավորված օբյեկտիվության և թափանցիկության պահանջների չպահպանմամբ, ոչ միայն խոչընդոտում է արդարադատության իրականացման տեսանելիությանը, այլև կասկածի տակ է դնում ողջ գործընթացի անաչառությունը:

Գործող իրավակարգավորումների բովանդակությունից բխում է, որ դատարանի նախագահի կողմից դատական գործերը բաշխելիս վերջինս հաշվի է առնում հետևյալ

⁴² Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի մարտի 12-13-ի «Դատական համակարգի անկախության. Մաս 1. Դատավորների անկախություն» վերտառությամբ թիվ CDL-AD(2010)004 զեկույցը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)004-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)004-e) հղումով:

չափանիշները՝ պատահականությունը, մասնագիտացումը, գաղտնիությունը, այբբենական հերթականությունը: **Ստացվում է, որ դատարանի նախագահի կողմից բաշխումն իրականացնելու շատ չափանիշներ և դրա կարգը սահմանող մանրամասն կարգավորումներ չկան:** Օրինակ՝ դատարանների նախագահների կողմից հաշվի չի առնվում գործերի բարդությունը, որը հաշվի առնելու անհրաժեշտությունն այդքան շեշտվում և կարևորվում է ներկայացված միջազգային իրավական փաստաթղթերում (օրինակ՝ Դատական խորհուրդների եվրոպական ցանց զեկույցը): Կամ օրինակ՝ դատարանի նախագահի կողմից հաշվի չի առնվում դատական գործերի բաշխման հավասարության չափանիշը, որի չկիրառման արդյունքում չի ապահովվում դատավորների ծանրաբեռնվածության հավասարակշռումը:

Ավելին, անվիճելի է, որ ի տարբերություն Համակարգչային ծրագրի միջոցով դատական գործերը բաշխելու դեպքերի՝ դատարանի նախագահի կողմից բաշխումն իրականացնելու չափանիշներ և դրա կարգը սահմանող մանրամասն կարգավորումներ, որոնք ուղղված կլինեն դատական գործերի բաշխման գործընթացի շրջանակներում անկախության և անաչառության ապահովմանը, չկան:

Ասվածի շրջանակներում, հարկ է անդրադառնալ դատարանի անկախության սկզբունքը խաթարող մեկ այլ կարևորագույն խնդրի. **դատական գործերը բաշխելիս դատարանի նախագահի կողմից հաշվի չի առնվում գործերի մուտքագրման ժամանակը:** Ավելին, դրա հետ մեկտեղ, Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով **դատարանի նախագահի կողմից դատական գործերի բաշխումն իրականացնելու համար սահմանված ժամկետ չկա:** Այսինքն՝ դատարանի նախագահից չի պահանջվում գործերի բաշխումն իրականացնել կոնկրետ ժամկետում, որպիսի անորոշությունը կարող է հանգեցնել իրավիճակների, երբ դատարան մուտքագրված գործերն օրեր շարունակ չբաշխվեն դատավորների միջև՝ այդպիսով անխուսափելիորեն հանգեցնելով նաև դատավարության կողմերի իրավունքների խախտումների:

Ավելին, գործերի բաշխման դատարանի նախագահի լիազորությունն իրականացնելու համար կոնկրետ ժամկետի բացակայությունը դատարանի նախագահի համապատասխան լիազորության իրականացման կամայականության ու հայեցողականության կասկածների լուրջ առիթ կարող է ստեղծել: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում կարող են գրանցվել դեպքեր, երբ օրվա ընթացքում դատարան մուտքագրված գործերը դատարանի նախագահի կողմից նույն օրվա ընթացքում չբաշխվեն դատավորների միջև և որոշ գործերով ցանկալի էլք ու արդյունք ապահովելու նպատակով դրանք հավաքագրվեն և բաշխվեն դատավորների միջև նախընտրելի եղանակով, այն է՝ «ցանկալի դատավորներին»: Ներկայացվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ կարևորվել է գործերի անմիջապես մուտքագրման պահին բաշխման իրականացումն ապահովելը (Եվրոպական հանձնաժողովը «Հայաստանի դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ» 2017 թվականի զեկույց):

Մեկ այլ կարևորագույն խնդիր է գործերի մուտքագրման հաջորդականությունը հաշվի չառնելը: Մասնավորապես, Որոշման 4-րդ կետի իրավակարգավորումից ստացվում է, որ նույն Որոշման Հավելված 1-ի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված իրավակարգավորումը կարող է իրացվել առանց ծրագրային լուծումների: Այլ կերպ ասած՝ Հավելված 1-ի 1-ին կետի 1-ին ենթակետը վերաբերելի է դատարանների նախագահների կողմից գործերի բաշխման դեպքերի նկատմամբ, իսկ այդ կետը որպես գործերի հավասարաչափ բաշխման չափանիշ է սահմանում գործերի բաշխման պատահականությունը՝ Ծրագրում ապահովվելով դատավորների միջև գործերը բաշխելիս պատահական ընտրությունը՝ առանց գործերի մուտքագրման հաջորդականությունը հաշվի առնելու:

Տվյալ պարագայում հարց է առաջանում նաև, թե ինչպես կարող է անձը վստահ լինել, որ իր գործը բաշխվելու է պատահականության սկզբունքով՝ պահպանելով դատարանի անկախության սկզբունքը: Ակնհայտ է, որ պատահականության սկզբունքը վերաբերում է դատարան մուտքագրված գործերին, քանի որ դատարանների նախագահների կողմից դատավորների ընտրություն չի կատարվում. վերջիններիս գործերը բաշխվում են՝ ըստ իրենց ազգանունների այբբենական հերթականության: Մինչդեռ, գործերը, որ պետք է բաշխվեն դատավորների միջև ըստ այբբենական հերթականության, ընտրվում են դատարանի նախագահի կողմից, իսկ ընտրության սկզբունքը պատահականությունն է: Պատահականության սկզբունքի կիրառելիության երաշխավորումը հնարավոր է առավելապես պարկերացնել դատական գործերի բաշխումն ավտոմատացված համակարգերի միջոցով ապահովելիս: Ինչ վերաբերում է դատարանների նախագահների կողմից պատահականության սկզբունքի կիրառմանը, վերջինս այնքան էլ իրատեսական չէ, հերևաբար չի կարող լինել վստահություն, որ այն գործնականում կարող է պահպանվել:

Գործերի մուտքագրման հաջորդականությունը հաշվի չառնելը Ծրագրի գործարկման պայմաններում թերևս ընդունելի է, մինչդեռ երբ գործերը բաշխվում են դատարանի նախագահի կողմից, ապա տվյալ օրվա ընթացքում դատարան մուտքագրված գործերի հաջորդականությունն այդ գործերը բաշխելիս հաշվի չառնելը մտահոգիչ է և դատարանի անկախության և անաչառության խաթարման ռիսկեր է պարունակում: Մասնավորապես, նման կարգավորումը դատարանի նախագահին հնարավորություն է տալիս դատավորների ազգանունների այբբենական հերթականությունը հաշվի առնելով հանդերձ՝ գործերը բաշխել «ըստ ցանկության»: Այսինքն՝ երբ չի պահպանվում գործերի մուտքագրման հաջորդականությունը, ապա դատարանի նախագահը հնարավորություն է ստանում մուտքագրված գործերից «ընտրված» որևէ գործ «պահել» մինչև «նախընտրելի» դատավորի հերթը հասնելը: Սա միանշանակ կասկածի տակ է դնում առհասարակ դատարանի անկախությունը, ուստի նման դեպքերը պետք է բացառվեն:

Վերոգրյալը ևս մեկ անգամ ամրապնդում է այն հետևությունը, որ դատարանի նախագահի կողմից դատական գործերի բաշխման հարցերը կարգավորող դրույթները՝

բաշխման չափանիշների ու հստակ կարգի թերի կարգավորվածության տեսանկյունից, չեն երաշխավորում բաշխման գործընթացի շրջանակներում անկախության ու անաչառության սկզբունքների ապահովումը, ուստի ոչ մի դեպքում չեն կարող ապահովել նաև անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի պատշաճ իրացումը:

Նման կարգավորումները լուրջ ռիսկեր կարող են պարունակել գործերի բաշխման հայեցողականության հարցում, ուստիև կասկածի տակ են դնում դատարանի անկախության սկզբունքը, հետևաբար նաև արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման հարցը: Նշվածից ելնելով էլ՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել առավել հստակ ու մանրամասն օբյեկտիվ չափանիշներ ու կարգավորումներ դատարանների նախագահների կողմից դատավորների միջև գործերի բաշխման գործառույթի անաչառության ու թափանցիկության ապահովման ուղղությամբ:

Սա առավել քան կարևոր է ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձր աստիճանի ապահովման համար:

Արձանագրված ռիսկերն ու վտանգները բխում են ներպետական կարգավորումների անկատարությունից ու դրանց ձևակերպումների որոշակիության բացակայությունից: Ուստի, քննարկվող կարգավորումների վերը ներկայացված անկատարության հարցը հարկ է քննարկել իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում:

Իրավական որոշակիության սկզբունքի իրավական բովանդակությունը մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման միջազգային մոտեցումներին համահունչ վեր է հանվել ՀՀ Սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկայում: Այսպես, Բարձր դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝

✓ Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ **իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը.** նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը⁴³:

⁴³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշումը:

✓ Իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում⁴⁴:

✓ Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ⁴⁵:

✓ Իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության⁴⁶:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանը անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքի գործողության շրջանակին շեշտել է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ⁴⁷:

Վերոշարադրյալում բարձրացված խնդիրների ու իրավական որոշակիության սկզբունքի ապահովման պահանջի համատեքստում առավել արդիական է դառնում դատարանների նախագահների կողմից դատական գործերի բաշխման ընթացակարգերի ու չափանիշների հստակ և որոշակի կարգավորումների բացակայության հարցը:

Ներկայացվածի շրջանակներում կարող ենք փաստել, որ առկա օրենսդրական կարգավորումները, որոնք ուղղված են անձի արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխավորմանը, իրենց անկատարությամբ և որոշակիության բացակայությամբ չեն համապատասխանում ինչպես անկախ դիտորդի, այնպես էլ իրավահարաբերությունների սուբյեկտների համար այդ կարգավորումների

⁴⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630, 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142, 2016 թվականի հունիսի 23-ի ՍԴՈ-1289 որոշումները և այլն:

⁴⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213, 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-1322 որոշումները:

⁴⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-1176 որոշումը:

⁴⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2017 թվականի մարտի 14-ի թիվ ՍԴՈ-1357 որոշումը:

կանխատեսելիության չափանիշին և կարող են տարակերպ մեկնաբանվել. քննարկվող կարգավորումները չեն համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքին: Արդյունքում չի ապահովվում դատարանի անկախության սկզբունքի ու հետևաբար Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորումը:

Գլուխ 6. «Անհաղթահարելի ուժ» եզրույթի մեկնաբանությունը

Սույն զեկույցում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցը քննարկման առարկա է դարձել նաև նույն դրույթում ամրագրված «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակության և դրա՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության տեսանկյունից: **Ինչպես արդեն շեշտվել է սույն զեկույցի 6-րդ բաժնում, Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված անհաղթահարելի ուժի առկայությունը դատական գործերի բաշխման միակ և հիմնական եղանակից շեղում կատարելու պարտադիր ու բացառիկ նախապայմանն է. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով նույն դրույթով նախատեսված բացառության համար չի նախատեսվում այլ պայման, քան անհաղթահարելի ուժի առկայությունը: Ոչ էլեկտրոնային եղանակով դատական գործերի բաշխումը հնարավոր է այդ խիստ բարձր շեմը հաղթահարելու դեպքում:**

Ասվածի շրջանակներում, ավելի քան անհրաժեշտ է քննարկել «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակության օրենսդրական մակարդակում բացահայտման հարցը:

Անհաղթահարելի ուժի բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասում: Մասնավորապես, նշված դրույթի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե՝ հայցի ներկայացմանը արգելք է հանդիսացել *արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք* (անհաղթահարելի ուժ): Այսինքն՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում անհաղթահարելի ուժի բովանդակությունն է կազմում արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհաղթահարելի ուժ է համարվում *տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների՝ օրենսդրությամբ ժամանակավոր սահմանափակումը*, որոնց դեպքում հնարավոր չէ իրականացնել աշխատանքային պարտականությունները, այդ թվում՝ հեռավար եղանակով:

Նշվածի հետ մեկտեղ, Օրենսգրքում բացահայտված չէ անհաղթահարելի ուժ եզրույթի հասկացությունը և այն միանշանակ չի ընկալվում՝ թողնելով մեկնաբանության լայն հնարավորություն: Այսինքն՝ Օրենսգրքի կարգավորումների բովանդակությունից պարզ չէ, թե ինչ չափանիշներ են հաշվի առնվում դատարանների նախագահների կողմից անհաղթահարելի ուժի առկայությունը գնահատելիս: Պարզ չէ, թե անհաղթահարելի ուժ եզրույթի հասկացությունը մեկնաբանելիս նույն եզրույթը պարունակող օրենսդրական այլ կարգավորումներում առկա որ մեկնաբանությունը պետք է հիմք ընդունել:

Հաշվի առնելով, որ Օրենսգրքում բացահայտված չէ եզրույթի հասկացությունը և առկա օրենսդրական այլ կարգավորումներում ամրագրված «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակությունից էլ նույնիսկ չի բխում քրեական գործի շրջանակներում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը անհաղթահարելի ուժի առկայություն դիտարկելը՝ կասկածի տակ է առնվում ձևավորված պրակտիկայի իրավաչափությունը: Պետք է ավելացնել սրան նաև մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարումների վտանգները, որ առաջ են եկել:

Այս հարցի հետ կապված՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դատավորները նշել են. «Իրավունքի տեսանկյունով անհաղթահարելի ուժի տակ պետք է հասկանալ արտակարգ իրադարձություններ, որոնք կախված չեն մարդկանց կամքից, գործում են օբյեկտիվորեն, չեն կարող կանխատեսվել, իսկ եթե անգամ կարող են կանխատեսվել, չեն կարող կանխվել և վերացվել»⁴⁸:

Բարձրագույն դատական խորհրդի պարզաբանումների համաձայն՝ քննարկվող կարգավորումների՝ սույն զեկույցի համար հիմք հանդիսացած գործնական օրինակում դատական գործերի բաշխումը Համակարգչային ծրագրով իրականացնելու անհնարինությունը պայմանավորված է եղել քրեական գործի շրջանակներում գործերի բաշխումն իրականացնող Համակարգչային ծրագրի առգրավման փաստի հիմքով անհաղթահարելի ուժի առաջացումով:

Սրա հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ Բարձրագույն դատական խորհրդի տեղեկությունների համաձայն՝ դատական գործերի բաշխումն իրականացնող Համակարգչային ծրագրի խափանումներ եղել են, որոնք սակայն համակարգային բնույթ չեն կրել և դրանք հնարավոր է եղել սեղմ ժամկետներում վերացնել Ծրագրի սպասարկումն իրականացնող համապատասխան ընկերության կողմից:

Միևնույն ժամանակ, Խորհրդի կողմից չեն պարզաբանվել այն չափանիշները, որոնք հիմք են ընդունվում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «անհաղթահարելի ուժը» գնահատելիս:

Նշվածի կապակցությամբ պարզաբանումներ են ստացվել նաև Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության, Վերաքննիչ քրեական, Վերաքննիչ վարչական, Սնանկության և Վարչական դատարաններից: Ըստ Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, ինչպես նաև Վարչական դատարանի՝ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործի շրջանակներում նախաքննություն իրականացնող մարմնի կողմից «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի սերվերի կառավարման բանալիներն առգրավելու արդյունքում առաջացել է էլեկտրոնային եղանակով դատական գործերի բաշխման անհնարինություն, ինչի մասին անհապաղ

⁴⁸ Հասանելի է <https://armdaily.am/?p=163166&l=am> հղումով:

տեղյակ է պահվել Բարձրագույն դատական խորհրդին: Նշված անհնարինությունը Խորհրդի կողմից քննարկման արդյունքում դիտարկվել է որպես անհաղթահարելի ուժ:

Այս մասին են վկայում նաև Վերաքննիչ քրեական դատարանից ստացված պարզաբանումները, որոնց համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը 2021 թվականի հուլիսի 22-ի նիստում արձանագրել է, որ անհրաժեշտ է առաջնորդվել Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով: Ըստ դատարանի՝ «անհաղթահարելի ուժ» է դիտարկվել ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիներն առգրավված լինելը:

Վերաքննիչ վարչական և Սնանկության դատարանների կողմից ևս նշվում է համակարգչային ծրագրի սերվերի առգրավման հետևանքով էլեկտրոնային եղանակով գործերի բաշխման անհնարինության առաջացմամբ պայմանավորված Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով դատական գործերի բաշխման իրականացումը:

Ստացվում է, որ «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակությունը չունի որոշակի բացահայտում նաև իրավակիրառ պրակտիկայում, դրա հետք մեկտեղ պարզ չէ, թե ինչ չափանիշներ են ելակետային համարվում անհաղթահարելի ուժի առկայության հարցը գնահատելիս: Նույնը նշել են նաև այն դատավորները, որոնք 2021թ. դեկտեմբերի 21-ի հրապարակային մտահոգություններով դիմել են Բարձրագույն դատական խորհրդին (հղումը սույն զեկույցի շարադրանքում է՝ վերևում):

Ավելին, Բարձրագույն դատական խորհուրդը ստեղծված իրավիճակի, այն է՝ ներկայում դատարանի նախագահի կողմից գործերի բաշխման, կապակցությամբ՝ հայտնում է, որ դատական գործերի բաշխման բնականոն աշխատանքը վերականգնելու ժամկետների առնչությամբ լրացուցիչ տեղեկությունների չի տիրապետում: Այսինքն՝ ստեղծված է անորոշ վիճակ:

Ստացվում է, որ ստեղծված իրավիճակը, որը պայմանավորված է օրենսդրական կառուցակարգերի անկատարությամբ, առավել խնդրահարույց է դառնում նաև տեխնիկական կառուցակարգերի անկատարության պարագայում ստեղծված իրավիճակի տևականության առումով: Ավելին, կանխատեսելի չեն նշված իրավիճակի հանգուցալուծման հնարավոր ժամկետները, ինչն էլ առաջացել է քրեական հետապնդման մարմնի որոշմամբ կամ միջամտության արդյունքում:

Ընդ որում, ստեղծված իրավիճակի պայմաններում համապատասխան տեխնիկական կառուցակարգերի (ավտոմատացված համակարգի ապահովմանն ուղղված ժամանակավոր և այլընտրանքային լուծումների) բացակայության և այդ իրավիճակի տևականության ու շարունակականության մասին իրենց դժգոհությունն են հայտնել դատավորները Բարձրագույն դատական խորհրդին ուղղված իրենց դիմումով⁴⁹: Դիմումով նշված բոլոր մտահոգությունները կապվում են անձի արդար դատաքննության իրավունքի ոչ պատշաճ երաշխավորման հետ:

⁴⁹ Հասանելի է <https://armdaily.am/?p=163166&l=am> հղումով

Համակարգչային ծրագիրը կաթվածահար արած գործի քննության, մասնավորապես՝ նախաքննության և դատաքննության ժամկետներով սահմանափակված չլինելու (էլ չենք խոսում դատական բողոքարկման ընթացակարգերի մասին) և դրա հետ կապված ռիսկերի մասին խոսվում է նաև սույն զեկույցի վերևի շարադրանքում՝ 6-րդ բաժնում:

Օրենսգրքի համապատասխան դրույթի ձևակերպումը ևս առաջ է բերում որոշակիության հարց՝ ստեղծելով հայեցողականության դրսևորման լայն հնարավորություններ դրույթի մեկնաբանության հարցում և տեղիք տալով տարակերպ մեկնաբանությունների: Էական խնդիրն այն է, որ դատական գործերի բաշխման պարտադիր՝ էլեկտրոնային եղանակից շեղման համար օրենսդրի սահմանած բարձր շեմը՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, հեշտորեն հաղթահարվում է «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակության որոշակիության բացակայությամբ պայմանավորված հայեցողականության լայն շրջանակի դրսևորման արդյունքում:

Նշվածն առավել խնդրահարույց է այն պարագայում, երբ նշված անհաղթահարելի ուժի հետևանքով կիրառվող օրենսդրական կարգավորումները հանգեցնում են անձի արդար դատաքննության իրավունքի սահմանափակման՝ դատավորի անկախության երաշխիքի ոչ պատշաճ ապահովման հիմքով: Քննարկվող իրավակարգավորումների հետևանքով առաջացող դատավորի անկախության երաշխիքներին սպառնացող վտանգների ու ռիսկերի մասին առավել մանրամասն խոսվել է սույն զեկույցի 8-րդ բաժնում:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից բարձրացված բոլոր մտահոգությունները չեն փարատվում:

Քննարկվող կարգավորումները ինքնին անձի արդար դատաքննության իրավունքը սահմանափակելու միտում կամ նպատակ չեն հետապնդում, մինչդեռ, ինչպես ներկայացվել է վերոշարադրյալում, այդ դրույթների որոշակիության բացակայությունը առաջացնում է այդ իրավունքի սահմանափակում: Նշվածից ելնելով էլ՝ զեկույցում բարձրացված հարցերը հարկ է դիտարկել նաև պետության իր պարտավորություններից շեղման և դրանց համաչափության համատեքստում:

Մարդու իրավունքների իրացման պատշաճ ապահովումն ու դրա ապահովման համար համապատասխան երաշխիքների ամրագրումը ընկնում է պետության պարտավորությունների շարքում: Պետության որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորի դերի իրագործման շրջանակներում վերջինիս կողմից իր պարտավորություններից շեղումը մի շարք իրավունքների երաշխավորման հարցում առհասարակ բացառվում է, որոշների հարցում էլ հնարավոր է միայն հստակ սահմանված դեպքերում:

Այսպես, Սահմանադրության 76-րդ հոդվածը սահմանում է մարդու և քաղաքացու այն հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք ենթակա են սահմանափակման արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ: Սահմանափակման ենթակա իրավունքների ու ազատությունների շարքում, ի թիվս այլնի, ներառված չէ անձի արդար դատաքննության իրավունքը: Այսինքն՝ սահմանադրաիրավական պահանջն այն է, որ անձի արդար դատաքննության իրավունքը՝ իր բոլոր երաշխիքներով հանդերձ, չսահմանափակվի նույնիսկ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ: Մինչդեռ, զեկույց ներկայացվածը փաստում է այն մասին, որ առկա օրենսդրական կարգավորումների որոշակիության բացակայությունը հանգեցնում է այդ իրավունքի սահմանափակմանը:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածը ևս սահմանում է Կոնվենցիայով ամրագրված պարտավորություններից շեղման հնարավորություն՝ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

Այս առումով, Եվրոպական դատարանը իր նախադեպային պրակտիկայում բացահայտել է, թե ինչ է բովանդակում արտակարգ դրությունը: Արտակարգ դրության հիմք հանդիսացող ճգնաժամը կամ վտանգը պետք է բացառիկ լինեն այնքանով, որ հասարակության անվտանգության, առողջության և հասարակական կարգի պահպանման համար Կոնվենցիայով թույլատրված սովորական միջոցները կամ սահմանափակումներն ակնհայտորեն բավարար չեն⁵⁰:

Դրա հետ մեկտեղ Եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ պետության լայն հայեցողության շրջանակներում է այն հարցը, թե առկա է ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն՝ միևնույն ժամանակ ամրագրելով, որ այդ հայեցողությունը անսահմանափակ չէ⁵¹:

Դատարանը գնահատելիս թե արդյոք պետության ձեռնարկած միջոցները անհրաժեշտ են, հաշվի է առնում մի քանի չափանիշներ՝ համապատասխան սահմանափակման

⁵⁰ Տե՛ս Դանիան, Նորվեգիան, Շվեդիան և Նիդերլանդներն ընդդեմ Հունաստանի (THE GREEK CASE – DENMARK v. GREECE ; NORWAY v. GREECE ; SWEDEN v. GREECE ; NETHERLANDS v. GREECE) գործով 1969 թվականի նոյեմբերի 5-ի զեկույցը, գանգատներ թիվ 3321/67 3322/67 3323/67 3344/67, կետ 153:

⁵¹ Տե՛ս Բրաննիգանն ու Մաքբրայդը ընդդեմ Միացյալ Թագավորության (BRANNIGAN AND McBRIDE v. THE UNITED KINGDOM) գործով 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատներ թիվ 14553/89 14554/89, կետ 43,

Մեհմեդ Հասան Ալթանն ընդդեմ Թուրքիայի (MEHMET HASAN ALTAN v. TURKEY) գործով 2018 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 13237/17, կետ 91,

Սահին Ալպայն ընդդեմ Թուրքիայի (ŞAHIN ALPAY v. TURKEY) գործով 2018 թվականի հունիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, կետ 75:

ենթարկված իրավունքների բնույթը, արտակարգ իրավիճակի պատճառ հանդիսացող հանգամանքները և այդ դրության տևողությունը⁵²:

Վերոգրյալի համադրմամբ՝ կարող ենք վստահորեն փաստել, որ պետության՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով սահմանված համապատասխան պարտավորություններից շեղումը հնարավոր է խիստ հատուկ դեպքերում և ըստ խիստ անհրաժեշտության՝ պայմանավորված օբյեկտիվ չափանիշներով ու միայն որպես բացառություն: Այսինքն՝ պետք է լինի հիմնավոր ու ողջամիտ, օբյեկտիվ հիմք ունեցող բացառիկ նշանակության պատճառ արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունից շեղումներ իրականացնելու համար:

Ավելին, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ **Կոնվենցիայով սահմանված իրավունքներից և ազատություններից շեղումները առկա և նմանատիպ իրավիճակներում կարող են համարվել թույլատրելի, եթե դրանք խստորեն անհրաժեշտ են և բխում են իրավիճակից, ինչպես նաև չեն հանգեցնում իրավունքի կամ իշխանության չարաշահման:** Կարևոր է նաև, որպեսզի բոլոր սահմանափակումներն ունենան իրավական հիմք և համապատասխանեն վերաբերելի սահմանադրական երաշխիքներին ու պահանջներին⁵³:

Ասվածի շրջանակներում հարկ է նկատել, որ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր միջամտություն կամ սահմանափակում իրականացվի ներպետական օրենսդրությանը համապատասխան և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում համապատասխան նպատակներին և ազգային շահերին հասնելու համար: Պետությունը յուրաքանչյուր պարագայում պետք է ապացուցի նման սահմանափակումներ կիրառելու անհրաժեշտությունը և կիրառի միայն այն միջոցները, որոնք համաչափ են իրավաչափ նպատակին հասնելու համար⁵⁴:

Ավելին, հատկանշական է Մարդու իրավունքների հանձնաժողովի դիրքորոշումը արտակարգ դրության պայմաններում դատական երաշխիքների ապահովման հարցի վերաբերյալ: Հանձնաժողովը հստակ արձանագրել է, որ ընթացակարգային երաշխիքները, այդ թվում՝ դատական երաշխիքները, չպետք է ենթարկվեն որևէ սահմանափակման՝ հանգեցնելով այն իրավունքների խախտմանը, որոնք սահմանափակման ենթակա չեն:

⁵² Տե՛ս Բրաննիգանն ու Մաքբրայդը ընդդեմ Միացյալ Թագավորության (BRANNIGAN AND McBRIDE v. THE UNITED KINGDOM) գործով 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, գանգատներ թիվ 14553/89 14554/89, կետ 43,

Ա.-ն և Ուրիշները ընդդեմ Միացյալ Թագավորության (A. AND OTHERS v. THE UNITED KINGDOM) գործով 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատ թիվ 3455/05, կետ 173:

⁵³ Տե՛ս Մեհմեդ Հասան Ալթանն ընդդեմ Թուրքիայի (MEHMET HASAN ALTAN v. TURKEY) գործով 2018 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 13237/17, կետ 210:

⁵⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Մարդու իրավունքներ» վերտառությամբ ձեռնարկը, հասանելի է <https://www.ohchr.org/Documents/Publications/HandbookParliamentarians.pdf> հղումով:

Ավելին, ըստ Հանձնաժողովի՝ օրինականության սկզբունքի ու օրենքի գերակայության հրամայականն է արտակարգ դրության պայմաններում արդար դատաքննության հիմնարար պահանջների հարգումն ու պահպանումը⁵⁵:

Վերը նշվածը վկայում է, որ դատական երաշխիքների երաշխավորումը պետության գերխնդիրն է իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից նույնիսկ արտակարգ դրության պայմաններում: Ուստի, ստեղծված իրավիճակում դատական երաշխիքների ոչ պատշաճ ապահովումը առավել քան արդարացված չէ և էլ ավելի է ընդգծում պետության կողմից այդ երաշխիքների ապահովման հրամայականը:

Թեև նշվածը վերաբերում է արտակարգ դրության պայմաններում իրավունքների սահմանափակման հարցին, այնուամենայնիվ անհրաժեշտ է խիստ ուշադրություն դարձնել նույնիսկ որոշակի իրավունքների սահմանափակման պարագայում այդ սահմանափակմանն ուղղված ընտրված միջոցների անհրաժեշտության ու համաչափությանը:

Համաչափության սկզբունքը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ: Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի բովանդակությունը բացահայտվել է Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում: Այսպես, Սահմանադրական դատարանը, սկզբունքին անդրադառնալով, արձանագրել է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպետք է խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև⁵⁶:

Վճռաբեկ դատարանն իր հերթին համաչափության սկզբունքի վերաբերյալ իր դիրքորոշումներով⁵⁷ արձանագրել է. «Համաչափության սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ իրավունքի համար ընտրված միջոցը պետք է՝

- պիտանի և անհրաժեշտ լինի հետապնդվող նպատակին հասնելու համար,
- **հետապնդվող նպատակի հետ գտնվի համարժեք հարաբերակցության մեջ:**

«Պիտանիության» չափանիշի համաձայն՝ միջոցը համարվում է պիտանի, եթե այն հնարավորություն է տալիս հասնելու հետապնդվող նպատակին: Մինչդեռ, «անհրաժեշտության» չափանիշի դեպքում միջոցը համարվում է անհրաժեշտ, եթե օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի և ավելի մեղմ միջոցով, բացի այն միջոցից, որն ընտրվել է:

Նույն որոշմամբ անդրադառնալով կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համարժեք հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ միջամտության

⁵⁵ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 29 ընդհանուր մեկնաբանությունները:

⁵⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 և 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշումները:

⁵⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0056/11/17 և թիվ ՍԴ/0088/01/12 որոշումների համապատասխանաբար 15-րդ և 16-րդ կետերը:

սահմանների խորությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի արժեքանական նշանակությանը և կշռին: Այլ կերպ՝ կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի արդարացի հավասարակշռություն, կիրառվող միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար չպետք է լինի չափից ավելի խիստ՝ շրջանցելով այդ նույն նպատակին նվազագույն ջանքերի գործադրմամբ այլ միջոցներով հասնելու ողջամիտ հնարավորությունները:

Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների համաձայն՝ մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվրանգվի դրա գոյությունը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում, լինեն համաչափ հետապնդվող նպատակին և կրեն ժամանակավոր բնույթ: Կիրառվող ցանկացած «ձևականություն», «սահմանափակում» կամ «տուգանք» պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինական նպատակին:

Քննարկվող դեպքում պետության առջև դրված խնդիրները երկուսն են՝ մի կողմից՝ անձի արդար դատաքննության իրավունքի (ներառյալ՝ դատարանի անկախությունը) պատշաճ իրացման ապահովումը, մյուս կողմից՝ հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը:

Ընդունելով հանդերձ, որ հանցագործությունների դեմ պայքարում պետության գործողություններն ուղղված են, ի թիվս այլնի, հասարակական կարգի ու անվտանգության, մարդկության անվտանգության պաշտպանությանը, ինչպես նաև հանցագործությունների կանխմանը՝ պետությունը պետք է ողջամիտ հավասարակշռություն ապահովի այդ երկու խնդիրների շրջանակներում իր կողմից ընտրված միջոցների ձեռնարկման հարցում:

Վերոշարադրյալը վկայում է, որ պետությունը իր առջև դրված խնդիրները հանցագործությունների դեմ պայքարի շրջանակներում չպետք է իրականացնի ի հաշիվ անձի արդար դատաքննության իրավունքի: Հիմք ընդունելով վերը արտահայտված այն դիրքորոշումը, որ քննարկվող կարգավորումները լիարժեք չեն ապահովում արդար դատաքննության, տվյալ պարագայում՝ հատկապես դատարանի անկախության երաշխիքը՝ առավել ակնհայտ է դառնում պետության կողմից նշված երկու խնդիրների լուծմանն ուղղված միջոցների հավասարակշռման անհրաժեշտությունը: Մինչդեռ, օրենսդրական կարգավորումների բովանդակությունը հանգեցնում է այն եզրակացության, որ պետությունը իր առջև դրված խնդիրներից մեկի լուծմանը տալիս է նախապատվություն:

Տվյալ պարագայում, նույնիսկ անձի արդար դատաքննության իրավունքի սահմանափակման նպատակ չհետապնդելով՝ պետությունն իր կողմից ընտրված

միջոցներով և օրենսդրական թերի կարգավորումներով սահմանափակում է այդ իրավունքը՝ միաժամանակ չպահպանելով այդ սահմանափակման համաչափության սկզբունքը. վերոշարադրյալը ևս մեկ անգամ ապացուցում է այն միտքը, որ չկա ողջամիտ և արդարացի հավասարակշռության պետության կողմից ընտրված միջոցի, որի արդյունքում առաջանում է իրավունքի սահմանափակում, և այդ հետապնդվող նպատակի միջև:

Նման պարագայում պետք է նախատեսվի այնպիսի լուծում, որը կհավասարակշռի երկու շահերը՝ մարդու իրավունքների պատշաճ իրացման ապահովումն ու հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը:

Քննարկվող օրենսդրական կարգավորումների բովանդակությունից բխում է, որ միջոցը, որը ընտրվել է պետության կողմից ընդհանուր դեպքերից շեղման համար իր առկա կարգավորումների սահմաններում ու ծավալով, չի բավարարում խնդրի այլընտրանքային լուծմանը ներկայացվող պահանջներին:

Տվյալ պարագայում, դատավորների միջև գործերի բաշխման ընդհանուր եղանակից շեղման պարագայում դրանց բաշխման մեկ այլ եղանակի նախատեսումը պետք է ապահովված լինի դատավորների անկախության անհրաժեշտ և բավարար երաշխիքներով, անհրաժեշտ հակակշիռներով. նման պարագայում թույլատրելի կլինի պետության կողմից իր խնդիրների լուծման նպատակով բաշխման ընդհանուր կարգից շեղումը: Այս պարագայում է, որ հնարավոր կլինի ապահովել վերը նշված երկու խնդիրների միջև ողջամիտ հավասարակշռությունը:

Ամփոփելով ասվածը՝ ակնհայտ է, որ օրենսդրական ու իրավական կարգավորումների, կառուցակարգերի և ընթացակարգերի անկատարությունն ու դրանց որոշակիության բացակայությունը, պայմանավորված օբյեկտիվության ու թափանցիկության պահանջների չպահպանմամբ, չի ապահովում դատական գործընթացի շրջանակներում հայեցողականության ու կամայականության բացառման երաշխավորման նկատմամբ հանրային ընկալումն ու բարձր վստահությունը, որն անհրաժեշտ երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքների տեսանկյունից:

Ուստի, անհերքելի է, որ օրենսդրական, իրավական ու տեխնիկական կարգավորումների ու կառուցակարգերի անկատարության ու բացակայության պայմաններում չի ապահովվում անկախ դատարանի երաշխիքը՝ այդպիսով անխուսափելիորեն ոտնահարելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքը: